


„Droschak“

ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՈՇԿԿ

R. R. BUREAU
LIBRARY
Adresse
Rédaction du "Droschak,"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԿԱՆ ԴԱՐՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ



Ս Ե Ր Ո Ր - Ա Ղ Բ Ի Ի Ր

Gloria victis!

Տարօնի առիւծը նահատակներ է:

Չենք կրնար չողբալ իր անսպասելի մահը եւ Հիւսալ միանդաման ժողովրդի այդ սրտոտ, աննկուն եւ հարազատ դաւկին վրայ:

Անոնցմէ էր Սերոբը, որոնց մայրերը բացառիկ աստղերու տակ կը ծնին, եւ որոնց հոգուն մէջ անցեալէն մտցուած դիւրազնական վերոթիւն ու շնորհք մը կանուցրեթէ եօթ տարի—արկածայից եւ փոթորկալից տարիներ—գրեմագրաւ եւ աննւաճ ապստամբ մը եղաւ օսման եան աշխարհակեր եւ թաթարական վարչութեան դէմ:

Անի մը ընկերներով ոչ միայն անուսարասալի աղբեց իր դարբարոս թշնամիին, այլեւ պատկառանք: Ամբողջ վաշտերու դէմ, ինքը լեռ մըն էր, Սիփանայ սարին պէս:

Սերոբը-Աղբիւր իր մայրենի կենսատոյ՞ այլ տարաբախտ հողին վրայ ուճացած, անոր հարուստ եւ վրէժխնդիր արծաղանքներով կորովյաճ ու դաստիարակած, հայրենի ճշմարիտ հերոս մըն էր. պատմաւորական քաջութիւնը որտապաւորող տաքարին հմայքովը ու կտրիճ աւելնովը հակայացած: Պարզ էր իղէպը, իրենց լեռներու ստինքներէն վազած աղբիւրներուն պէս գուլպալ եւ առողջ, կուռ ու վեհուճ: Իր գործին մեծութեան ու ներքաւանութեան վրայ մարտիրոսի հորը ու ապառաժէ հաւատքը ունէր որ կուտար իրեն այն գերմարդկային արիւթիւնը եւ քաջագործութիւնը որ բացառիկ կակներու մենաշնորհն է:

Այն դժուրակ ու աննպաստ հանգամանքներուն մէջ, որոնցով չըջապատւած էր անմոռանալի հերոսը, եւ որոնց դէմ արեւի հասակովը կըմրշամարտէր իր Սօսիին հետ, այնքան ինքնախնաման շարժումով մը եւ ռազմութիւնով մը, ոչ մէկ հասարակ մահկանացու չէր կարող երկար ապրիլ: Իւր մըն էր, երբ շանթաւարող յանդգնութիւնով քրդական լէշկերներու ու կանոնաւոր զօրքերու դէմ կուրի հարկ ըլլար: Անպարտելի մնաց մինչեւ վերջի շունչը, մինչեւ որ սեւեռովի դաւաճանութիւնը զայն թակարդը ձգեց:

Իր թշնամիները „Սերոբ փաշա“ կը կանչէին անոր. անկեղծ էր այդ գովասանքը. բայց հայ ժողովուրդը աւելի համեստ, աւելի սրտաբուխ սիրուն եւ խորհրդանշող անուն մը տւած է. „ժողովրդական հերոս“ը կոչելով զայն, — հին աշուղի մը բամբիւրն արժանի — իր մանչող մարմնացու՞ աղբային շղթայակիր զգացումին եւ սրբազան ուխտին:

Յեղին ուժեղ, պատերազմիկ, ապրիլ ուզող եւ լոյս աղաղակող ողին էր Սերոբը, զինքը ծնող հողէն անբաժան, լոշտակի մը պէս խրած էր անոր մէջ, զոր կորզել յանդիմողը պէտք էր մահը աչքը առնէր:

Մեր մէջ սրտեր շատ կան, որոնց իւրաքանչիւրին մէջ մէյմէկ առիւծ է քնած. ո՞վ պիտի գտայ իր մէջ, խորունկ ցնցումը, ներշնչումը, հիանալի հերոսին տեղը բռնելու եւ անոր ձեռնարկած վեհ ու ազնիւ գործը, նոյն ջերմանդու թիւնով եւ նոյն հայրենասիրական աճուն հաւատքով մը առաջ վարելու համար: Կարժէ, որ ինքզինք եւ անվեհեր հողինը, այդ հոյակապ կերպարանքին առջեւ, հարաւ եւ փղձկուն խոյանքով մը, ինչպէս Կեսար Աղբաւորի արձանին առջեւ, աղաղակեն. „եւ կ'ուզէի Սերոբ մը ըլլալ“:

Չքնաղ հերոս-գործիչի մահով գրեթէ ամբողջ արիական ընտանիք մը կ'աներուութանայ. իրեն հետ կը մեռնին իր 12 տարեկան կորիւնը, իր երկու եղբայրները, — գժբախտ ու սեւ ճակատագրին զոհ սրտաշարժ եւ դիւցադնական ցոտքը մը — իսկ Սօսին, որ կենսական ուժն ու զորալիքն էր իր ամուսնուն եւ անոր բացակայութեանը յաճախ կը հրամանատարէր քաջամարտիկ խորին, վիրաւոր գերի ինկած է: Սյժմ բանտին մէջ, հայ Սմազօնը կուլայ, իր առիւծն ու կորիւնը. . . Աղբային սրտարցունքով շըջապատենք զայն:

Սերոբը, այդ դիւրազն, համակրելի տիպարը, մեր աղբային գոյութեան կուրի ու փառքի էջերուն էն հարազատ, էն սրտի մօտիկ մեծագոյն դէմքերէն եւ պարծանքներէն մէկը պիտի մնայ: Իր մահը սակայն ծաղիկ մը մահն է, բեղուն ապագայով:

Ճակատագրի փորձանքներուն առջեւ խրոխտ մնալ եւ վեր արկել անհրաժեշտ է ազգի մը համար, եթէ չ'ուզեր իր աստղը կորսնցնել: Դժբախտութիւններու առջեւ է որ ազգերու թերութիւնները ու մեծութիւնները կը ճանչցին: Ի՛նչ չարտելով մեր յռուստեւ, սկեպտիկ եւ բացասական տեղոյն կողմերը, գօտեսնուինք առաւել կան եւ կորովալիք զգացումներու համերգութիւնով մը:

Սերոբը, աղբիւր-իղէպը թող ըլլայ, ստրկութեան մէջ լացած ու դիւցադնացած, եւ ազատութեան համար ծարաւի ժողովրդի երազուն հողին. իսկ Սօսին Տարօնի հերոսունին, „ոսկիամալ“ տիպար կինը բոլոր այն լալկան, սրտակակիժ եւ արիասիրտ մայրերուն ու հայուհիներուն, որոնք իրենց ծոյցն վրայ կ'ապրեցնեն զեղին կեանքը եւ իրենց սրտատրոփ կուրծքին տակ, ինչպէս տաճարի մէջ սրբազան նախանձալուզութիւնով մը կը պահպանեն ցեղին դարաւոր ձայնը, ազատութեան հառաչանքը, կայծուկրակը. . .

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԿՐԱԿԸ

I

Պատուութեամբ մանուկ, թուով 80 հազար, լճնամի Մարտին, ղուրկ «կրթադար» գորապետներից, առանց ղլևտրական «ուսման», ձեռքին մի հրացան միայն նրանք հրաշքներ են գործում, հրաշքներ ուժի, հարստութեան, մեծութեան, հրաշքներ համաշխարհային փառքի, միջօնների դէմ:

Բոէրններն են այդ հրաշադործները:

«Մեր կուրը չի ունենայ իր նմանը պատմութեան մէջ. և այն, ինչ որ մնը կ'անենք, կը զարմացնի ողջ աշխարհը».—այդ համարձակ, վտահ խօսքերով էր, որ ամբողջ մարդկութեան առաջ դուրս եկաւ ամէնամեծ բոէրը նախագահ Կրիստոֆեր, երբ դեռ չէր հեռու լինող նոյնի որոտը: Այլիսնը ժպտաց. Աֆրիկայի ծերունի ժողովուրդապետի այդ պատգամի վայ և իր այդ ժպտը հաղորդեց ամբողջ աշխարհին:

Սակայն երկու ամիս դեռ չի անցել, և այդ ժպտը արդէն տեղի է տւել դառն արտասուքի Մեծ-Տրիտանիայի սահմաններում և կատարեալ ապշութեան՝ այդ սահմաններից դուրս...

Դարավերջի հերոսը՝ բոէրն է:

— «Տուգելայի ճակամարտից յետոյ, — ասում է անգլիացի մի օֆիցեր, — երբ անցում էի բլուրի վտայով, իմ առաջ դտայ մի վիրաւոր, կրթնած ժայռին, տագնապի վերջին րոպէներում: Մտանցաւ Մի ձեռքով բռնած իր սոսկալի վերքը, միւսում սնդած հրացան՝ աղկարդ ծերունին, մարող աչքերով մի ինչ որ բան էր փնտրում: «Արջին անգամ, խնդրում եմ, վերջին անգամ բերեք, որ գրկեմ որդուս, ևս մեռնում եմ»: Ըուռ եկայ և մի քիչ հեռու դտայ մի պատանի, հազիւ 14 տարեկան, նոյնպէս հրացանը ձեռքին, ուժասպառ, մահամբռ: Արտասուքը աչքերիս, շտապ գրկեցի պատանուն և բերեցի հոր մօտ: Աղէկաւոր էր տեսարանը և ևս դարձրի երեսս, որ չտեսնեմ: Մի քանի րոպէից, երբ նորից դարձայ դէպի նրանց, որդին արդէն անշնչացած էր: նոյնպէս արդէն դիակնացած հօր գրկում»:

Եւ եթէ դուք, հիասթափուած հայ ընթերցող, կարծում էք, որ այն երկիրը, ուր 60 տարեկան հօր հետ միասին ազատութեան համար ղոհւում է և 14 տարեկան որդին, կը ստրկանայ և իր շինքին կ'առնի դերութեան անարդ շղման, — սխալուում էք: Սխալուում էք այնպէս, ինչպէս սխալուցին ըրր 25-րդրդէն և շատ ըրրդեր, որոնք հաւատացրին բարեմիտ Աիկտորիա թագուհուն, թէ ծննդեան սօները դեռ չհասած՝ Պրեստրիայում կը ծածանի անգլիական դրօշակը: Այդ դրօշակի տեղ Տրանսվալի մայրաքաղաքում 5.000 անգլիացի զերիների դրխին ծածանում է այն ժողովուրդի դրօշակը, որ կոչւած է վայրենի Աֆրիկայում պատուաստելու մարդկային մարի ամենամեծ հանգանակը՝ մահ կամ ազատութիւն...

II

Այդ ազատութիւնը ժամանակակից բոէրը միայն գրքերի մէջ չսիրեց: Մեռ 40 տարի առաջ, նրա պապերը վառւած էին այդ կրակով և երբ առաջին անգամ անգլիական «քաղաքակրթող» զորքը ոտք դրեց նոր բնակավայրի շեմքի վրայ՝ բոէրները աւելի լաւ համա-

րեցին նոր հայրենիք փնտրել. քան ստրկանալ Բոէրական նոր սերունդը ազատութեան մէջ իր նախորդներից շատ առաջ անցաւ նա իր բոյնը սիրեց ինչպէս առիւծ: Այսինի Աֆրիկայի անմշակ ձորերում նա մի երջանկութիւն միայն ունի — ազատութիւն, և այդ միակ երջանկութեան համար է, որ այսօր կրգով ու ծափով անգլիական հզօր բանակի դէմ է դուրս դալիս բոէրը, բոէր-երիտասարդը, բոէր-ծերունին, բոէր-կինը, բոէր-պատանին, որի հզօր բաղից կրքը չի վրիպում գնդակը և որ զիտի մեռնել նոյն հպարտութեամբ, ինչ հպարտութեամբ սիրում է կուել...

Տեղը, ժամանակը փոխուց, բայց գաղափարը մնաց նոյնը: Դարեր առաջ այդ գաղափարը, իբրև ազատութեան կրակ, վառեց մի բուռն ժողովուրդ-եւրօպայի հարաւում, որը պարսկական բռնապետութիւնը ջարդելու համար ստեղծեց հեյլէնական ամենամեծ պարծանքը՝ Թեբեոսի պիլը:

Նոյն կրակն էր, որ մեր դարում, սուլթանական ուժերը խորտակելու համար, առաջ բերեց Միսսօբօն-գիր և Քիօսիւծ ոցի հերոսութիւնները յունական Արշակունստում և հերոսութիւնների մի սյլ շարք Բալկանի վրայ: Ազատութեան այդ կրակն էր, որ վառեց կուրացիներին՝ սպանական դարևոր բռնութեան դէմ, որ ստեղծեց արիւնտա, բայց խնկելի էլեր փոքրիկ ազգերի՝ Լեհերի, իրլանդացիների և վերջին տարիներս էլ թիւրքաց հայերի պատմութեան մէջ:

Այժմ այդ կրակը հրաշքներ է գործում՝ «վայրենի» կրկիրների մէջ, ուր Ֆրիկայեան կղզիների յամառ դիմադրութեան այսօր յաջողում են բոէրների քաջագործութիւնները Հարաւային-Աֆրիկայում, որոնք ազատութեան պատմութեան մէջ արդէն մտցրին նորագոյն թերմօպիլը՝ Մոդերնիզմի ճակատամարտը:

Եւ եթէ 20-րդ դարում վայրենի Աֆրիկային վիճակեց ուէ դեր կատարել պատմութեան մէջ, դրա առաջին պատիւը պատկանում է այն փոքրիկ, թուով նւազ, բայց ազատութեան կրակով բորբոքւած և անվահեր ազգին, որ երէկ անուէն չ'ունէր, բայց այսօր պարծանք է դարձրել իր անունը...

III

Այդ կրակն է ահա, որ պակասում է Փոքր Ասիայի մէջ՝ նոյնպէս անկասութեան համար կուող մի ուրիշ ազգի՝ հայի: Եթէ 80 հազար բոէրները, տեղին 20 հազար կուտներ, 3 միլիոն հայերը, բնական է, աւելի կարող են տալ Եւ եթէ այդ 20 հազար կուտները «խնկութեամբ» չսկսեցին գլուխ բարձրացնել ամենաուժեղ Բրիտանիայի դէմ, որ իր ձեռքի տակ 400 միլիոն ժողովուրդ ունի ամենեւին «խնկութեամբ» չպիտի համարել հայ կրակն ապստամբութիւնը Թիւրքիայի նման պետութեան դէմ, որ 19-րդ դարի սկզբից արդէն քայլաքայլ դիմում է դէպի անկման և վերջնական կործանման անգունդը:

Հայութիւնը ունի անցեալ, որ ոգևորեց ժամանակակից սերունդը, բոէրը այդ չունի: Հայութիւնը ունի մի հայրենիք, որի հետ նա կապւած է ոչ միայն օջախով, այլ դարերի մի ահագին շղմայով: Բոէրը այդ էլ չ'ունի: Հայութիւնը, վերջապէս, իբր կու-

խ թ ա ն, իր դժ ունի մի այնպիսի թշնամի, ինչպէս է Թիւրքիան, որին կործանելը պատմական պարծանք պիտի լինի ամէն մի կուլտուրական ժողովուրդի համար. բռնիք սյր էլ չ'ունի:

Բայց այն, ինչ ունի Հարաւային Աֆրիկայի «Տիլէնը» և որից, ինչպէս մի կախարդական աղբիւրից, դուրս է ցայտում ոյժ նրա բազիլի և ոգ և որ ու թ ի լ ի ն նրա սրտի համար, — այդ պակասում է հայութեան:

Ազատութեան կրակն է այդ:
Այդ կրակը կայծեց մի Սասուն, մի Զլյճուն. նա բորբոքեց ազատութեան ոգին հայութեան մասնակի շրջաններում. այդ շրջաններից դուրս եկան, ճշմարիտ է, անձնէր կուլտուր, որոնք եթէ էյաղթեցին, բայց գոնէ քաջաբար նահատակեցին, — սակայն նա չվառեց ամբողջ ազգը, չյարբնեց հայութեան բոլոր մասերում այն բարձր զգացմունքները, անանց որոնց ոչ մի մարդ և ոչ մի ժողովուրդ ընդունակ չէ հերոս լինելու:

Երբ որոտաց առաջին թնդանթը Տրանսվալի սահմաններում և առաջին բռնի արիւնը լուսիւնց, այդ արիւնը դարձաւ վրէժի մողական հրաւեր բոլորի համար, և մեր տեսանք, թէ ինչպէս աշխարհի բոլոր կողմերից բռնիները շտապեցին դէպի իրենց հայրենիքը, մասնակից լինելու ընդհանուր գործին: Առաջնականը թողեց իր առևտուրը, ուսանողը իր ուսումը, հարուստը իր դարձութիւնները, ամէնքն էլ վերադարձան, ամէնքն էլ մտան կուր դաշտը: Անմաս չմնաց և բռնի կինը, որ նոյնպէս դէպ վերցրեց — Բայց սրանից մի քանի տարի առաջ, 1890-1897 թւականներին, երբ հայկական յուսատու շարժումների հետ միասին՝ ամբողջ Հայաստանը դարձել էր պատմութեան մէջ չտեսնուած արիւնոտ դրամայի մի դժբախտ բեմ, — հայ երիտասարդը հանդիստ խղճով հիւսիս և եւրոպա էր դնում ուսանելու. հայ հարուստը աւելի պինդ էր փակում իր՝ առանց այն էլ անմատչելի՝ տան դռները. հայ գրողը շարունակում էր աւելի ոգևորած երգել «վարդն ու սոխակը» կամ «գեղատեսիլ կուսին մազերը»: Հայ կղերը իր սովորական եռանդով աղօթքներ էր կարգում սուրբանի համար, — մոռանալով որ անկախութեան հարցը մասնակի խնդրի հարց չէ, այլ ամբողջ ազգի հարց, որը լուծելու համար անհրաժեշտ է ազգի բոլոր մասերի և բոլոր խւանների միակամ, շարժապատ մասնակցութիւնը: . .

Դժբախտ է ժամանակակից հայ սերունդը, դժբախտ ոչ թէ քաղաքական ձախուրդութեամբ, այլ նրանով, որ ազատութեան կրակը չվառեց, չբորբոքեց, նրա բոլոր մասերը, չզարբնեց նրան ինչպէս մի ամբողջութիւն, նոյնիսկ այն ժամանակ, երբ լծնամին խղեց նրանից 300 հազար որդիք, այն ժամանակ, երբ նա կանգնած էր իր գոյութեան ամենամեծ խորհրդի, — իր ազատութեան առաջ:

IV

Ժամանակակից բռնի պարծանքը միայն նրա յաղթութեան մէջը չէ: Եթէ նա մինչև իսկ յաղթուի, կը յաղթուի նոյնպէս պարծանքով: «Թշնամին կը գտնի մեր հայրենիքի մէջ ոչ թէ ստորակներ, այլ աւերակներ ի կոյտեր»: Այդ է բռնիականութեան վճիռը:

Այդ պիտի լինի և հայութեան տեսակետը: Եթէ

ժամանակակից հայութեան վիճակած չէ իր ապագայ սերունդին ժառանգութիւն թողնել մի ազատ-հայրենիք, նա պարտաւոր է գոնէ մարդկային պատմութեանը ժառանգութիւն թողնել մի անմահ, ստրուկ ազգերին ոգևորող անուն, — ազատութեան նահատակի անունը: Բաւ է, որքան հայը ստրուկ ապրեց: Եթէ հային վիճակած է մեռնել, նա պէտք է մեռնի իրրե կուրղ և ոչ իրրե մորթուող, իրր ազատութեան գիւնուր և ոչ իրր ստրկութեան գոհ:

Այդ է բռնի նշանաբանը:
Այդ թող լինի և հայի նշանաբանը:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Ի Ն Ն Ե Ր

Ս Ե Ր Ո Ք Ի Մ Ա Յ Ը
(ՆԱՄԱԿ ՄՈՒՇԵՆ)

Շատնց է, բայց վերջերս մանաւանդ, կառավարութեանը վճռած էր ամէն կերպով մէջտեղէն վերցնել Սերորը, որուն գոյութեան մէջ վտանգ կը նշմարէր: Կառավարական բոլոր էնտրիկները, բունի միջոցները, դուր անցած էին, մինչև որ սզգային սևաբառանութիւնը միջամտեց և ծուղակի մէջ ձգեց լեռան «իւժը» որուն մոռնուած հերք էր ի կիտ զօրավարներու ու վաշտերու սիրտը դող հանելու համար:

Կառավարութիւնը լրտեսներու մասնաւոր խումբ մը կազմակերպած էր որոնք ամէն տեղ Սերորին հետքին վրայ էին. այդ տխուր գործին մէջ օժանդակեցին անորակիչ հայեր, որոնց ցածութիւնը, ոճիրը աննրբելի պիտի մնան. ատոնք նոյնիսկ կառավարութեան խօսք տուած կին սպաննել տալ Սերորը: Ընկերներու կողմէն հարկ եղած զգուշութիւնները տրուած էին. բայց, դժբախտ հերոսը, երկու ամիսէ ի վեր ունեցած անձնական տկարութեան պատճառով անհնարին եղած էր հեռանալ թէև քիչ շատ զգուշութիւններ ձեռք առած էր: Փոխորդը սուսիկ փուսիկ կը պատրաստուի եղեր սակայն: Բաղէշի Ալայ պէկը — Գուրգէնի նահատակութեան հեղինակը նմանապէս — դէպքէն քսան օր առաջ Մշոյ դաշտը հարստահարական այցելութիւն մը տալով վերադարձաւ Բաղէշ: Վտանգը կը կարծէր թէ անցած է: Ամսուն 25-ին նոյն պէկը յանկարծ 500 զօրք առած հետը, սուտ լուր կը հանէ թէ Մօթ կնայ քիւրդ-ցեղապետներուն վրայ կերթայ զանոնք պատժելու համար, այդ առթիւ Պալաքցի, Խեանցի և այլն. քիւրդ աշիրէթներէն ալ 1500 հոգի կանէ և խաբ տալով, Խոյթ գաւառակէն կ'անցնի և դիշերով անակնկալ կերպով կուգայ կը պաշարէ Կէլիէ Կուրան գեղը, ուր կը գտնուէր Սերոր իր կնոջ և 12 ընկերներով: Բացի քանի մը մասնիչներէ ժողովուրդը ոչինչ զիտեր այդ մասին, այնքան ջանացած էին երկայնները խարուսիկ ընել:

Գեղացիները առտուն կանուխ երբ կը տեսնեն որ պաշարած են, անպատրաստ ըլլալով ցերեցան կը փախին: Սերոր և իր ընկերները կը մնան իրենց իրենց: Փախստի ոչ մի հնար չկայ. կատարել կուր անխուսափելի է: Տասերկու հոգի 2000-ի դէմ, կատակ չէ: Երբ թշնամին բաւական կը մտնիկնայ, մերոնք դուրս սլանալով ապաստանած անէն՝ զերկնք շրջապատող

կրակին դէմ երեք խումբի կը բաժնուին և հրացանա-
 ձգութիւնը կարգուտի պէս կըսկսի երկու կողմէն: Ափ-
 սո՛ս, բանը բանէն անցած էր. թշնամին արդէն գիշերով
 ամուր ու անառիկ տեղերը գրաւած, մերիններուն ուրիշ
 բան չի մնար բայց եթէ հերոսութիւնը մինչև յուսահատու-
 թեան մղել: 2-նայելով որ Աղբիւրը երկու ամիսէ ի վեր տկար
 էր, նորէն իր անդուգական և պաշտելի կնոջ Սօսիի քաղ-
 ճութեամբ 8 ժամ անընդհատ կը կուրի: Անմասն Աղ-
 բիւրը անշնչացած կ'իյնայ, իր կինը կը խլէ անոր հրա-
 ցանը և երկու ժամու դիցադներդութեան արժանի քա-
 ճութիւնով մը կը սասանեցնէ թշնամին յանդգնու-
 թիւնը: Հայ կինը այդ րոպէին կ'անմահամար Սօսիի
 անձին վրայ: Թշնամին շնորհիւ իր բռնած գիրքին յաղ-
 թանակը կը տանի:

Կը նահատակին Աղբիւրը իր մէկ հատիկ 12 տա-
 րեկան տղան, երկու եղբայրները և գեղին տէր Քաջ
 քահանան: Իսկ հիանալի Սօսին, ծանրապէս վիրաւոր-
 ւած գերի կ'իյնայ: Ինը հոգի նահատակ կ'իյնան մնա-
 ցած չորս ընկերները, կը յաջողին փախչիլ, որոնք ազատ
 են այժմ: Թշնամին կորուստը յայտնի չէ. գիշերով
 մաքրեր տարեր են. ոմանց ըսելով քսանէն աւելի է,
 ինչ որ Սերորի պէս հերոսի մը համար, աննշան և չիք
 վարձատրութիւն մըն է. իհարկէ այդ թիւը աւելի պատ-
 կառելի կըլլար, կուրը աւելի քաջալերական, եթէ Տա-
 րծնի առիւծը կանխաւ պղտիկ իմաց մը ունենար և
 վանդակի մէջ փակած չմնար:

Կուրէն ետքը, աւագակ Ալի պէիի վճճմակը բարի
 նախանձով մը ամբողջ կէլիէկուզանը, 150 տունէ
 աւելի, աւարի կուտայ:

Կանոնաւոր զօրքը և աստիճանաւորները տարեր են			
Եզ	125	Հատ	Պղինձ 117 կտոր
Կով	115	"	Կապերտ 95 "
Ոչխար	492	"	Անկողին 321 ձեռք
Հրացան	22	"	Դրամ 6.570 դահ.

Եւ ուրիշ շատ մը մանրմունք իրեղեններ:

Աղբիւրին գլուխը և Սօսին, իր վէրքերով աւելի զիւ-
 ցադնացած, քաղաք բերին և թըքական քէյֆեր կա-
 տարեցին. երկրորդ առտուն հրապարակի վրայ, նահա-
 տակին գլուխը կրկին ցցի վրայ ցոյց դնելէ ետքը, մեծ
 յաղթանակով, տալուներով, զրօշակներով Բաղէշ տա-
 րին: Լուր ելաւ թէ Սօսին ճամբան մտեր է, բայց
 ստուգուած չէ դեռ: Բաղէշի կուսակալը և իրենները
 երկու ժամ ընդառաջ պացած են Ալայ պէիին, կարծես
 ուսուց վրայ մեծ յաղթանակէ մը դարձած ըլլալը:

Յ. Գ. — Մուշի առաջնորդը դէպքին մանրամասնու-
 թիւնը տեղեկագրեց արդէն պատրիարքարան:

Ասոր հետ կը խրկեմ Սերորին ն.իրած ժողովրդա-
 կան երգ մը, որ տեղացիներէն ստեղծագործուած է:

«Ա Ղ Բ Ի Ի Ր»

Ժողովրդական Երգ

- | | |
|---|--|
| 1. Մալթի գաւառ,
Սոխորդ գեղ ըսած,
Իրեն բնակիչ
Աղբիւր ջան
Բարիքով լցած: | 2. Պողոս, Գրիգոր
Թիւրքին սիրական
Կուզեն վերջացնել
Աղբիւր ջան,
Ամբողջ Հայաստան: |
|---|--|

3. Պողոս, Գրիգոր
Սորհուրդ կաղմեցին,
Թիւրք ոստիկաններ,
Աղբիւր ջան,
Ամբողջ կանչեցին:

4. Սանթ տըւեցին
Նորէն խրկեցին,
Թեղուտ ու Սոխորդ,
Աղբիւր ջան
Յանկարծ պատեցին:

5. Անիծած Դաւիթ
«Աղա-ջան» կանչեց.
— Կեղծութեամբ ըսաց—
Աղբիւր ջան,
Թէ զօրք մեզ պատեց:

6. Անիծեալ ըլլալ
Դաւիթ մնած տեղ,
Աւերակ դառնար,
Աղբիւր ջան,
Կոշտեան ըսած գեղ:

7. Սոխորդայ վերե՛
Նուարուտ մեծ սարէն
Յուցակ տըւաւ մեզ,
Աղբիւր ջան,
Ձէն մօսիներէն:

8. Բաղէշ վիշայէթ
Անուն Սայփի-Չոր
Սօսի ¹⁾ կը կանչէ.
«Հոգիս ջան,
Կեանքդ ազգին տուր:»

9. Կեցցէ քաջ Աղբիւր
Եւ իր մօսիին.
Յիսուն և հինգ զօրք
Աղբիւր ջան,
Ըրաւ ցան ու ցիր:

10 Անունդ էր Աղբիւր
«Մինչև Ռուսաց Դուռ
— Աշոտ կը գրէր —
Աղբիւր ջան
Կտրա՛, վճիռ տուր:»

Ն Ա Մ Ա Կ Ա Լ Ա Յ Կ Ե Ր Տ Է Ն

(ՌՈՌՄ-ԹՐԱՅԱՆ ՍԱՎՄԱՆԱԳԼՈՒՄ)

Հոկտեմբեր 27-ին խումբ մը զինակիր հայեր Ալաշ-
 կերտէն անցած ատենին պահ մը դադար առնելու հա-
 մար, կըստիպին Խաստուր գիւղի ս. Աստուածածին եկե-
 ղեցին ապաստանի, կարելի եղածին չափ հետքերնին
 գողտուկ պահելով:

Կառավարութիւնը հոտ կ'առնէ — իհարկէ մասնիչի
 միջոցով: Տէրվիշ աղա (տեղին միւտիրը), իր տղով և
 բազմութիւ. քիւրդերով կ'ուզայ կը պաշարէ եկեղեցին
 և կը հրամայէ խումբին զինամասի ու անձնատուր ըլլալ:
 Այդ ըսելուն չի մնար, երբ խումբէն մէկը կրակ կընէ
 և Տէրվիշ աղան վար կը գլորէ: Կուրի կատաղի նշանն
 էր այդ: Տէրվիշ աղայի հետ իր տղան և շատ մը քիւրդեր
 զնդակահար կ'իյնան: Լուրը, կայծակի պէս ամէն կողմ
 տարածելով, Մուլա-սիւլէյման գիւղէն քսանի չափ
 ոստիկաններ, իրենց զինուորական մեծին հետ, և ուրիշ
 կողմերէ անթիւ քիւրդեր, կը հասնին և կը խուսին
 կուրի վայրը: Կուրի աւելի յանդուգն և մոլեգին կեր-
 պով կը շարունակի մինչև իրեկուն, թշնամին զգալի
 կորուստով:

Միջնադին, քիւրդերը այս անակնկալ դիմադրութենէ
 և իրենց կրած կորուստէն կը վհատին, որով մշեր-
 նին անկարգութիւնը կըսկսի տիրել: Զինակիրները օգ-
 տուելով ասկէ, միմուն, 60 խասուորքներ հետերնին,
 կը ձեղքեն պաշարման գիծը և կ'անցնին լեռները:
 Թշնամին չի յանդգնիր հետապնդել զանոնք. կուրի
 մէջ հայերու կողմէն կ'իյնան 30 հոգի:

Կառավարութիւնը կարծելով որ այդ խումբը Դու-

1) Սօսի կամ Սօսուն Աղբիւրի կնոջ անունն է:
 Ծ. 70.

տակի ճամբով ներքին գաւառներուն մէջ թափանցած ըլլայ, իսկոյն ամէն կողմ ըւր կամ հեռագիր կը խրկէ, որ ճամբաները կտրեն:

Զինակիրներու քաշելէն ետքը Խաստուրը կը դառնայ աւարի և արեան դաշտ: Արիւնկակ պաշտպանները գիւղը հիմնովին կը թալանեն, կը կողոպտեն լուսաւորչական և կաթօլիկ եկեղեցիները, գիւղին քահանաներուն երկուքը կը սպաննեն և ժողովուրդէն ծեր, այր, կին, երեխայ, անխոր, 300 հոգիի չափ, դաղանային անխղճութիւնով մը սրէ կանցնեն: Հարսներ, աղջիկներ կ'առւանգուին: 150 տուն Խաստուրէն մնացած ցիրուցան մանկտիներ ու պառաններ շղջակայ գիւղերը ապաստանած, բոբիկ ու մերկ, մուրացկանութիւն կ'ընեն անթուութենէ չմեռնելու համար:

Քիւրդերը ատով ալ չեն բաւականանար, աւարառութեան ծարաւին այնքան կը սաստկանայ որ միաժամանակ կը թալանեն Զէտկան, Խոշիան, Մոլլա-սիւլէյման, Եղնի-թիւիէ և Ամատ գիւղերը: Կողոպուտը առանց զոհի չըլլար, սպանւածներ և վիրաւորածներ կան:

Արդէն կոտորածը և աւարառութիւնը եղած լինցած էր, երբ մէջտեղ կը հանւի կայսերական անունով քաշուած հեռագիր մը, որով կը հրամայէր ապստամբական շարժման հետ յարաբերութիւն չունեցող վայրերը պաշտպանել քիւրդերու յարձակումներէն և նոյնիսկ սպանւացներ են քիւրդերուն, որ եթէ չհնազանդին կանոնաւոր զօրք պիտի խրկուի վրանին (ե՛ս):

Թիւրք կառավարութեան սովորական սիստէմն է, նախօրօք հրահանգներու համաձայն անյուր գազանութեանց սասարեզ տալէն վերջը, իսկոյն գ թ ա ո ա տ կայսեր մէկ հրամանը կը հասնի, որ կը հրամայէ կաւատ խալիֆայական իրատէով մը, որ իր հ ա լ ա տ ա ռ ի մ հ ա յ հ ա տ ա կ ն եր ու ն խ ն ա յ ու լ ի:

Թօփրադ-գալէի գայմագամը և առաջնորդական տեղապահ Քընուկի Մամբէ վարդապետը արիւնահեղութեան վայրը գացին գիւղացիներուն կրած վնասներու, կորուստներու և մահերու չափը իմանալու և տեղեկագիր մը պատրաստելու համար:

Յետո՞յ... — Ելըրըզի համար այդ սիրտ զովացնող տեղեկագրէն ետքը սուլթանը պահանջները լաւ մը կը լրուտէ դունչը արեան ճապաղըներու մէջ խոթած շան մը պէս:

Ն Ա Մ Ա Կ Բ Ա Լ Ա Ռ Ի Է Ն

27 հոկտեմբեր 1889

Հայուն համար ամէն մէկ վայրկեան, ամէն մէկ շնչառութիւն արհաւիրելից տարիներ են՝ որ կ'անցնին, սև յուսահատութիւն մը, անհուն աւեր մը թողլով իրենց ետին: Մէկ կողմէն թշուառութիւնն ու աղքատութիւնը իրենց մահառիթ ճիրաններով կը կրծեն, կը լափեն օրէօր խեղճ հայութիւնը, միւս կողմէն բռնապետին անգութ, երկաթէ թաթը կը հարածէ, կը քանդէ անդադար: Օրերը տրտում ու տարտամ մթութեամբ մը կը սահին, կեանքը պատիժ մը, պատուհաս մը կը թւի. թշուառութեան հոսանքը կը պատէ, կը պաշարէ մեզ ամէն կողմէն: Ո՞ր երթայ, ի՞նչ ընէ խեղճ հայը: Ամէն քայլափոխիկ թշնամին դիմացդ է, արիւնուշտ ու գոխեմ, սուսերամերկ և վայրագ...

Նորէն Մեծ Մարդասպանին հլու արբանեակները, Բալուի խորը՝ աւերակներու մոխրակոյտի մը վրայ վերջստին բոյն դնող աղքատիկ, աւուր հացի կարօտ, խաղաղիկ ժողովուրդի մը մէջ յուղափոխակափ պատուակներով, շարք մը անյուր, քստմեծի ոճիրներ գործեր են, որոնց արձագանքը սիրտ կը կտրտէ:

Պօլիսէն տարագիր հավաքելին անթիթի, ծարաւ Խարբերդի փողոցներուն մէջ կը թափառի, թշուառութեան դառն դրօշմը ճակտին վրայ, իր ընտանեկան այնքան դժնդակ հոգեբէն ծաած գլուխը հանդէսնելու տեղ մ'անգամ կը զլացուի անոր: Գերման որբանամ միսիօնարութիւնը յիտուն ոսկիի նպաստ մը տւած է հավաքիցիներուն՝ մասամբ ամոքելու համար համատարած թըշուառութիւնը: Բայց եկուր տես, որ կառավարութիւնը սկսած էր դժոխային մտքեր յղանալ այդ նպաստի բաշխման մէջ, իբր թէ հայերը այդ դրամով զէնք պիտի առնէին: Ուստի պատրուակ մը կը փնտուէր, որ և, իհարկէ, չ'ուշացաւ: Օր մը սյգեկութի ատեն հրացանի ձայներ կը լսուին խեղճ գիւղացիներու այգիներուն մէջ, անմեղ թուրքուի, բայց աւա՛ղ որ ուրուրը գլխնուն վերե էր: Յեղապահը լրտեսած էր ամէն բան: Առիթը լաւ առիթ էր, հայը զէնք ունենալ... Իսկոյն քսան հատ հեծելազօրք կը պաշարեն Հավաք: Ալ անգթութիւնը չափ չ'ուներ. հանդիպած գիւղացին գաւազանի հարւածին տակ կիսամեռ կ'իյնայ: Այսպէս գազանային խոզը ժուլութիւններով ամբողջ համայնք մը ահ ու սարսափի կը մատնեն: Բռնապետութեան մէջ նոր տուարդի միջոցն է աս, ճ ե ռ մ ա կ տ է ո օ ը, որուն Մեծ Մարդասպանը նախընտրութիւն տւած է այժմ: Յետոյ տասերեք հոգի շղթայակապ քաղաք կը տանին: Ճամբան ձիերու արագ քայլերուն հետ կը քաշուտեն, խեղճերուն սրունքները կը ջախջախին ձիերուն երկաթէ պայտերուն տակ, արիւնի կաթիլներուն հետք մը ձգելով իրենց ճամբուն վրայ:

Հիմա Հավաքը դատարկւած է երիտասարդներէ, որոնք փախեր, մերձակայ գեղերը ապաստաներ են: Ծեր մարդուկներու ու պառաւ կնիկներուն մնացած է գիւղը, որոնց լաց ու կոծանքը կը լսուի միայն, անմարդաբնակ անտառի մը մէջ բուերու եղերական, ողբագին, խուլ հառաչներուն պէս ահաւոր տպաւորութիւն մը գործելով մարդուն վրայ: Եղակայ պէկերը, որոնց կը պատկանի գլխաւորաբար Հավաքի հոգը, առօք փառօք եկեր նստեր են Հավաքի մէջ:

Օսմանեան պոռնիկներան դիւանագիտութիւնը այս անգամ ալ իհարկէ, պիտի խաբէ միշտ խաբւիլ սիրող Եւրոպան. թերևս ձևականութեան համար միջև անգամ տեղապահը Պօլիս կանչելի Հավաքի անցքերու պատասխանատուութիւնը (°°) պահանջելու...)

Այս արիւնոտ անցքերը արձանագրած միջոցիս չեմ կրնայ չ'անդրադառնալ զայրագին կիրքով մը, մեր անտարբեր դասակարգին վրայ, որ այդպիսի դժոխային իրականութիւններու դիմաց իսկ քարսիրտ և չարսիրտ անգթութիւն մը ցոյց կուտայ՝ միշտ մեղադրանքը մեր հայ եղբայրներուն վրայ նետելով: Սորուկ, հոտած մըթնոլորտի մը մէջ, ափսո՛ս, որքան խարխափ մնացեո ենք, զուրկ հոգեկան ուժերէ և թրթռումներէ:

Հայ ժողովուրդ, դարաւոր ստրկութեան շղթաներուն տակ արդէն ընդարմացած կ'երևիս, անտարբեր աչքով դիտելով անմեղ զոհերուդ ծաղիկ արիւնին կաթիլները:

վայրենի թշնամիից սուրին ծայրէն: Հերի՛ք, ժամանակ չէ վճատելու ու ընկրկելու... Արևախառնները պատիւնիս մեր տառապանքին մէջ մխրձելով մեր պողոզատիկը: Թողվենք ուժերնիս կեանքի և աղատութեան մեծ կուրս համար և ջանա՛ք ձեռք ձեռքի ստեղծել այս շար ու բարի աշխարհին մէջ մեղի համար երկիր մը՝ ուր արիւնի տեղ կանաչուր ծլին և որոնց հետ մեր հոգիներն ալ բացւին թաքնաբեր իրէականերու և երկինք մը՝ որ աստուածային ժպտաներ տայ մեղի փոխանակ աղի արցունքներու...

ՆԱԽԱԿ Կ. ՊՕԼՍԵՆ

Ա Մ Ս Ա Վ Ա Ն Տ Ե Ս Ո Ռ Ն Թ Ո Ղ Ն

15/27 նոյեմբեր 1899

Ի բ ա տ է ի ն հ ե տ և ա ն ջ ն ե բ ը: Կայսերական իրատէէն առաջ՝ գաւառներն հոս և ասկէ գաւառներ քանի մը հայ ճամբորդներ դեռ ևս կարող էին երթնել կաշառքի կամ խնդիրքի զորով: «Ողորմած» իրատէին երևնալէն ետքը առ ալ կտրեցաւ: Թիւրք կառավարութիւնը ժողովրդական առածի սատանային պէս՝ ամէն բանին հակառակը կը հասկնայ:

Հոկտեմբեր 24-ին, այսինքն իրատէէն բաւական ատեն ետքը, ասկէ հեռագիր մը դնաց գաւառական իշխանութիւններուն, որ դ ու ը ս ե բ է ն ե կ ո Ղ հ ա յ ե ը չ թ ո Ղ ն է ի ն ի բ է ն ց տ ե Ղ ե ը Վ ե ը ա գ ա ո ն ա լ ու:

Առհասարակ եթէ հայ մը գաւառներէն կուզէ դործով մը հոս գալ, կամ թողլուութիւն չի ստանար կամ կանոնաւոր «թէղքերէ» ալ առնէ, ճամբայ ելլելուն՝ ծովփերու վրայ տեղ մը կ'արդելի կը մնայ: Ասկէ ծննդավայր մեկնողները ևս նոյն բախտին կ'արժանանան:

Սամսոն, Կիրասոն, Տրապիզոն լեցուն են կամ գաւառներէն հոս գալու կամ ասկէ գաւառները երթալու համար կանոնաւոր անցագիր առած հայերով: Կը մնան խնդները խաներու մէջ, անգործ, սպասելով ճամբան շարունակելու հրամանին: Ունեցած ստակներն ալ կը հատի, կընկնին ծանր աղքատութեան և յուսահատութեան մէջ, իսկ անգին ունեցած առևտուրին կամ այլ գործերին կոչնշանայ, օջախին կը մարի, որուն հետևանքն է հիւանդութիւն, աղքատութենէ ծնած յուսահատութիւն, մահ, անձնասպանութիւն և իր սարօքը:

Կառավարութեան ուզածն ալ ադ է. փձացնել քայքայել հայու թէ՛ տնտեսական, թէ՛ բարոյական կեանքը, ստիպել զանի թողնելու իր հայրենիքը և երթալ ուր որ կ'ուզէ:

Բաղմաշնորհ կայսերական իրատէի երևնալէն ետքը պետութեան այս «տակտիքը», անոր վստիմունքին այս եղանակը աւելի բացայայտ, աւելի անպատկառ կերպով գործադրուի սկսաւ:

Տրապիզոնի մէջ 200-է աւելի ճամբորդներ ժողոված են՝ և հրամանի կըստստն ճամբանին շարունակելու համար: Թողլուութիւն չկայ ու չկայ: Տեղոյն առաջնորդը պաշտօնական նամակ մը կը գրէ պատրիարքարան, խնդրելով միջամտել՝ կառավարութեան առաջ այդ սովորած ըլլալու վիճակին հասած խնդրէն:

րուն ճամբայ մը բանալու համար ու մատնացոյց կընէ կայսերական իրատէին տաճ մէկ այլ թաւատ շնորհը՝ որով ճամբորդութեան դիւրութիւններ կը խոստացին հայերուն: Օրմանեան, լիւր անտարբերութիւնով մը կը պատասխանէ. «Այդ ճամբորդներուն համար ես բան մը չեմ կրնար ընել. դու աշխատէ, ճամբայ մը գտի՛ր դրկէ»:

Իրատէին վրայ յոյսերնին դրած, քանի մը միամիտ հայ վաճառականներ ելիւր եկիւր են Պոլիս առևտուրի և ահա քանի մը շարաթէ բանտէ բանա կը տարին: Մէկ քանիներն արդէն ետ դուրսեցան, վերջին դահեկանին տղուկ պաշտօնեաներու գրպանները լեցնելէն ետքը, բանտերէն ալ ուղղակի նաւ տարուցան, ծանօթներու երեսին անգամ չկրնալով տեսնել:

Այս ամէնուն հանդէպ դիտե՛ք ինչ դիրք բռնած են մեր ազգային իշխանութիւնները, մեր Օրմանեաններն ու Արթիւնները:

Փոխանակ բողոքելու, փոխանակ յիշեցնելու սուլթանին ըրած գէթ վերջին դրաւոր շնորհը՝ այդ ստորագրաւ միմոսները շնորհ հակալուութեան ուղերձ մը կը պատրաստեն սուլթանին ու կառավարութեան՝ ըրած անպատեղի ողորմածութիւններուն համար:

Մարդ էակի մը անվայել բաներ են, ինչքան ալ լիւր ըլլայ ան:

Նոյեմբեր 6/18-ին, շաբաթ երեկոյեան, Արթիւն փաշայի տանը ժողով մը տեղի ունեցաւ այդ շարաշուք ուղերձը խմբագրելու համար, որ ետքէն Խառն ժողովին ստորագրուելու պիտի ներկայացէր: Եպիսկոպոսներէն միայն 2 հոգի ներկայ եղած են, իսկ մնացածները մերժած են մասնակցիլ:

Այս ազգագաւ ուղերձին ձեռնբեցութիւնը կը պատկանի ճիւղիթ Օրմանեանի և իրեն արժանի խորհրդական ազգասէր Արթիւնի:

Օրմանեան կուի խնձորը զլտորելէ ետքը, այժմ ինք ղները գէմ կը ցուցնէ այդ ուղերձին, համոզած ըլլալով որ չի կրնար չընդունել. ամէն մարդ իր գլուխը փորձանքի չընելու համար՝ պիտի ստորագրէ... Իսկ Օրմանեան՝ իր աղուեսութիւնը պիտի բանեցուցած ըլլայ և աժանագին ժողովրդականութիւն շահած միանգամայն:

Անգամ մը եթէ այդ ուղերձը Խառն ժողովին ներկայացաւ, ալ ստորագրելը պարտաւորութիւն է: Անհատական առաքինութիւն, սկզբունքի, համոզումի համար ունէ զրկանք կրելու քաղաքացիական քաջութիւն չիք են հոս: Եղբորթիքը, ստորանալը, կառավարութեան բարեկամ երկրորդ հրէջ մը ըլլալը բարձրագոյն բարոյականութիւն կը համարուի: Իրենց սողունի գոյութիւնին պաշտպանելու համար պատրաստ են ոտքեր, պագնել, մեղայագրել ստորագրել, ամէնէն նողկալի ուղերձներու տակ ստորագրել, դաւաճանել... Անառակային բաներ են, բայց գոյութիւն ունին. ցաւ է:

Ահա բարոյական այն հսկայական անկումը, որուն վիճակած ենք մենք Պոլսի հայերս սյսոր...

*

Ա շ ը գ ե ա ն: Հոկտեմբեր 26-ին մեռաւ Խորէն արքեպիսկոպոս Ալքեզան, Պոլսի նախկին պատրիարքը: Հոս ամէնուն ուշադրութիւնը դարձաւ այն երկոյթին վրայ, որ

15 տարի առաջ, նոյն օրը մեռաւ և վարժապետներն: Ի՞նչ մեծ տարբերութիւն. ներսէս ու Աշոգեան, Երկու հակաձայրեր. . . Ահլը հայու ամէն սուրբ ձգտումներու մարմնացում, մեկը. . . Եւ ի՞նչ չափ մեծ էր ժողովուրդին բռնած զիրքին տարբերութիւնը: Այն ատեն ամէն հայ լացաւ, գէթ խորունկ «ախ» մը արձակեց իր կուրծքէն, իսկ այժմ, բացի քանի մը կրօնաւորներէ և հայ-թիւրք էֆենտիներէ, ոչ ոք տեղէն շարժեցաւ:

Օրմանեան փառաբանական դամբանական մը ըսաւ: գովեց զայն իրր վանահայր, իրր դրակահանդէտ և մանաւանդ իրր պատրիարքը, աղլին ու կառավարութեան հաւատարի մ. . .

Այո, կառավարութեան հաւատարիմ էր Աշոգեան, անուրանալի է: Իսկ աղլին հաւատարիմ ըլլալը միայն Օրմանեան կրնայ հասկնալը Աշոգեանն է Օրման-Արթիւնի «թրքին-բարեկամ» քաղաքականութեան նախահայրերէն մին. ատոր համար Օրմանեան բառեր չէր գտներ զայն երկինք թոցներու համար:

«Պատրիարքական բարձր պաշտօնին վրայ կեցածները աւելի հեռու կը տեսնեն, ըսաւ Օրմանեան. վարիները յաճախ չեն հասկնար անոնց դրութիւնը և անիրաւորէն կը քննադատեն զայն, յարձակում կը գործեն անոր վրայ»: Պարզ էր, որ Օրմանեան այս բառերով աւելի ինքզինքն իրր անմեղ զոհ մը ներկայացնել ուզեց, քան Աշոգեանը պաշտպանել. . .

*

Կ ի չ ի կ ի ա: Կրտէէն, Կովիասէն, Ռուսմանիայէն ու Պուլլարիայէն բազմաթիւ մահմտականներ կը գողթեն Թիւրքիայ: Երկէն 11,000-էն աւելի կան Իլլիրի շրջակայքը: Ետնոցմէ 3,000 հոգի նոյնմբեր 6-ի (ն. տ.) կայսերական իրատէի մը համաձայն՝ խրկեցան Կիլիկիա, Ետանայի վիլայէթը, ուր 3 դիւղ շինուած է անոնց համար պետութեան հաշուով. 2,000 ալ խրկեցան նորէն Կիլիկիոյ սահմաններուն մէջ. Հալեպի վիլայէթը: հոկտեմբեր 30-ին ալ Ռուսմանիայէն նոր եկած 500 գողթականներ ասկէ Իլլիրի վրայով Էնկիւրի խրկեցան հոն հաստատուելու համար:

Ռուսմանիայի պատերազմէ իվեր աս է կառավարութեան քաղաքականութիւնը. լեցնել հայրենակ գաւառները գաղթական մահմտականներով և հայրը հալածել կոտորել թիւր նազիցները:

*

Թ թ ք ա կ ա ն գ ո թ ծ ե ռ ռ. Հոկտեմբեր 29-ին սուրթան ստորագրեց իրատէ մը. «Թոյլատրել այսինչ անուն ընկերութեան վանայ ըջին վրայ շոյենաւեր բանեցնել և շոյենաւային երթեկութիւն հաստատել»: Եթէ. . . իրականանայ:

— Կայսերական հարկման ընդհանրացում ամենազոր Զեյթեր քղան: Արքքէ արտրեկցաւ: Թշւառականը պալատի մշ ըտտի պաշտօն է ունեցեր Ենկիլոյ կողմէն: Ռուսական դեսպանատուն կ'իմանայ այս, ու կ'իրպով մը սուրթանի ականջը կը հասցնէ. Զեյթեր կ'արտրի:

Եթէ քիչ մը մտան ընտելութիւն կատարել, Երլտղի պալատին ամէն պաշտօնեաններն ալ Մէքքէ պիտի խրկին, որովհետեւ ամէն ալ աս ու ան պետութեան վարձուած լրտեսներ են:

— Արրորդ անգամն է Համիդ իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ մեծ-կայսրոսին իր միակ զաւկին Զաւիտ

պէի սպաննման համար: Այս անգամ ալ ցաւակցութիւնը համաձայն էր բաւական խոշորեկ գումարով մը: Սուրթան անոր տղուն մահուան կսկիծը ստակով կուղէ խեղդը:

Թէ Զաւիտի սպանումը, թէ Շէֆքէտ էֆենտիի յանկարծակի մահը բացատրութիւն կը դաննեն սապաւ:

Երկուքն ալ հակահամդական և քիչ մը աւելի ազատական կուսակցութեան մարդեր են եղած և երկուքն ալ վեհապետի հրամանով են ղոհուած: Հաճի բին Մուսթաֆային ատրճանակի գնդակը գործեր է պալատի հրամանով, իսկ Շէֆքէթ էֆենտին տաճկական սուրճին ղոհ է եղեր:

Մուսթաֆան ընտելութեան կենթարկել: Արդարագատութիւն չէ, այլ կոմէտի մը. ամէն նշան կը ցուցնէ, որ պիտի աղատի կամ իր գաւառը աքսոր խրկել: Մեծ կայսրոսն ալ զորեղ ձեռք մը զայն կը պաշտպանէ. . .

15/7 նոյնմբեր

Փ ա ո ա բ ա ն ա կ ա ն ու ղ ե թ ձ ը: Ստորնութեան ու խայտառակութեան բաժակը լեցուցաւ. ալ տեղ չկայ:

Թիւրքիոյ լայնածաւալ կայսերութեան մէջ անկիւն մը չկայ, ուր հայը չհալածուի. անկիւն մը չկայ, ուր հայու աչքէն արցունքի տեղ արիւն չհոսէ. . . անկիւն մը չկայ, ուր հայը իր խոնջացած ու թշուառ զուխը վար գնէ. . . և մեր ազգային իշխանութիւնները, մեր պատրիարքն ու Խառն Թողովը «Կարմիր Գազանին» փառարանութեան, շնորհակալութեան լիտի ուղերձ, կը ներկայացնեն:

Կատարեցաւ: Ռւրթաթ երկնոյն, նոյնմբեր 21/12-ի գժբախտ գիշերը Խառն Թողովին ներկայացուցին Արթիւն և Օրմանեան իրենց նախաձեռնութեամբ գրած ուղերձը:

Ենգամներէն շատերը ներկայ չէին. ներկայ եղողները անբանային անտարբերութեամբ ստորագրեցին ուղերձը: Բացակայներուն ալ հետեւալ առտու ներկայացուցին և անոնք ալ սուսիկ-փուսիկ ստորագրեցին: Աւ ոչ մէկ անձ մը, և ոչ մէկ զբացմուտի տէր հայ մը գտնուցաւ մշլերնին, որ համարձակ էր չստորագրել: Կէթ քիչ մը բողոքեւ. . .

Շարաթ կէս օրէն քիչ մը առաջ, բեռնաւորած խայտառակութեան այդ հսկայական աղբով Օրմանեան զնաց պալատ, ներկայացուց այդ իր գատապարտութեան էութիւնը կազմող ուղերձը Հրէշի առաջին քարտուղարին: Ներկայացաւ. . . ոչ Օրմանեան. . . թուղթը՝ Հրէշին. ան ալ իր գոհունակութիւնը յայտնեց: Աւ Օրմանեան, զոհ սրտով, մեկնեցաւ պալատէն գերազոյն պարտք մը կատարած ըլլալու սրտաշարժ ախմախութիւնով մը:

Կը զուրցելի, որ Արթիւն խմբագրած էր ուղերձը աւելի հաւատարմական, աւելի քծնող ոգիով մը և Օրմանեան քիչ մը — իրր թէ — բարեփոխած է ու ատոր համար ալ Թահսին պէյ քիչ մը սառնօրէն ընդունելութիւն ըրած է:

*

Կ ա ռ և ո թ ձ ե ռ ռ ա կ ա լ ու թ իւ ն ն ե ռ Նոյնմբեր 11-ի գիշերը Ալպանական կայսերական թիկնապահ գունդի զինւորները, Երլտղի խիստ գաղանի հրամանի մը համաձայն, մտան երեք անձերու տունը:

երկուքը տունը գտան, անկողիններէն հանեցին և ծածկուած կառքերով տարին պալատ, իսկ երրորդը Ատալպերդ Մաթթօսքիին «Ուրիշէ-Աքոստա» ներկայացուցին դուրս ելած ատենը ձերբակալեցին ու տարին: Ձերբակալուած անձերն են. Մ օ լ լ ա Ձ հ ա Գ ա զ ա ս կ է ր, Շէյխ-իւլ-խալաֆի կրօնական բարձր խորհուրդին անդամը, սուլթանէն ու Շէյխ-իւլ-խալաֆէն խիստ սիրուած, բազմաթիւ շքանշաններով, աստիճաններով ու փառքով զարդարուած մէկը. ամէնէն գիտուն ու լուսաւոր մտլան: Ֆ ե ր ի դ պ է յ՝ պետական խորհուրդի քաղաքացիական մասի անդամ, հմուտ իրաւագէտ և լուսաւորեալ ու ազգեցիկ անձ մը: Ս ա յ ի դ պ է յ, որ ներկայացուցին ելած ատենը բունեցաւ՝ թրքական արատեմիք բառարանին հեղինակն ու խիստ յայտնի հրատարակագիր մըն է. ըլլալով հմուտ ու ուսեալ փաստաբան մը՝ Սայիդ հասած էր պետական խորհուրդի իրաւաբանական մասի նախագահի պաշտօնին, զոր կը վարէր քանի մը տարիներէ ի վեր:

Երեքն ալ նշանաւոր անձեր, բազմաթիւ ազգեցիկ կուսակիցներով, ազգականներով ու ընկերներով: Ասոնցմէ ետքը ձերբակալեցան և այլ 70-ի չափ քիչ կամ շատ կարևոր անձեր:

Նոյեմբեր 5/17-ին պալատի մէջ գումարեցաւ արտակարգ դատարան մը, որոյ անդամներն էին մեծ-պարքօր, զինւորական, ներքին գործոց և արդարութեան նախարարները, ուսման գործի ընդհանուր հրամանատարը, պետական խորհուրդի նախագահը և շէյխ-իւլ-խալաֆը:

Երկուշաբթիէ մինչև հինգշաբթի տեւց դատը: Անդամներէն երկուքը մեղադրեալները մահու կողմէն դատապարտել, քայց մեծամասնութիւնը, զիտելով զանոնք մեղաւոր բարձրագոյն անձին դէմ դաւադրութեան մէջ, դատապարտեց զանոնք Հարաւային Արաբիա յաւիտեանական արքորի:

Նոյեմբեր 8/20-ին Արաբիա գացող Մահմուտիէի շոգենաւը տարաւ այս նոր Յ լուսամիտ գլուխներն ալ... Աս երեքն ալ գացին աւելանալու այն անթիւ արքորականներու, թունաւորածներու, կախաւորներու ու անյայտացածներու ընդհանուր թմին վրայ, որ ամէն տարի կը հնձէ Երզրզի Մեծ-Մօլթը...

Երեք դատապարտեալներու տունները կատարուած խուզարկութիւններու ատեն գտնուեցան շատ մը թուղթեր: Երեքն ալ եղած են սերտ յարաբերութեան մէջ Հայրէզդի բրինսին հետ (սուլթանի եղբայրը) և կողմն եղեր Համիդը տապալել և անոր տեղը դնել կամ Հայրէզդի կամ Ռաշիդ բրինսներէն մին: Ոմանք ալ կըսեն թէ դաւադրութեան ոգին եղած է սուլթանէն աուած իր երէց որդին՝ Մէհմետ Սէլիմը:

Աքսորուածները ամէնքն ալ ազգեցիկ և յայտնի անձեր են: Թիւրք բարձր շքանշանները խիստ վերգլուած վիճակի մը մէջ են: Օրէօր կը սպասուին նոր ու անակնկալ ձերբակալութիւններու:

*
Քանի մը բարձրաստիճան թիւրքեր (շուրջ 30 հոգի)՝ փ ո լ ի թ ի ք ա մը բանեցուցած ըլլալու համար՝ անգլիական զեսպան սըր Օ'Քոնօրի համակրական ուղերձ մը կը ներկայացնեն Թրանսպալի դէմ ըրած յաղթութեան մը առթիւ Ուղերձին լուրը կիյնայ սուլթանի

ականջը. կասկածը կը ծնի: Սուլթանը կը կանչէ այդ 30-ն ալ պալատ և անոնցմէ շատերը բանտարկել կուտայ: Օ'Քոնօր կը լսէ այս և նոյեմբեր 23/11-ին պալատ կը շտապէ հանգստացնելու սուլթանին հիւանդ երեակայութիւնը: Ար բացատրէ որ ուղերձը միայն Թրանսպալի պատերազմին մէջ անգլիական զէնքին տարած յաղթութեան առթիւ է, և այլն: Որո՞ւ կըսես. դեսպանի միջնորդութիւնը կասկածը աւելի կը բորբոքէ... Բայց ի վերջոյ սուլթանը զիջաւ, դեսպանին եռանդուն միջամտութեան վրայ, աղատ արձակել զանոնք:

Նոյեմբեր 24/12 Պարօն Փօն-Մարշալը, գերման դեսպանն ալ ելաւ սուլթանին այցելութեան: Նիւթն էր Պաղտատ-Պոլսոյ երկաթուղին: Սուլթան յայտնեց որ թէ իր հօր և թէ իր երազածն է եղեր ատ երկաթուղին, բայց իր նախարարները շատ մը կարևոր հարցեր ունին ուսումնասիրելու, վերջացնեն՝ այն ատեն ես անպատճառ գերմանացիներուն կը յանձնեմ, քանիկ ես այդ ժողովուրդը խիստ կը յարգեմ ու կը սիրեմ՝ ըսեր՝ է:

30 Նոյեմբեր

Մուշէն, Թօփրագ-Գալէէն, Կարինէն և Պիթիսէն եկած են տեղեկագրեր, որոնք կը նկարագրեն հոկտեմբեր 27-28-ի դէպքերը Աշաշկերտում և Սասունում:

Այս տեղեկագրերը, որոնք իրենց մանրամասնութիւններով սարսափ կ'ազդեն ամէն մի մարդու վրայ, կը կարդացին Խառն Ժողովի մէջ Նոյեմբեր 18/30-ին, ուր բաթ երեկոյեան: Ժողովի անդամներէն մէկ քանին, չնայելով տիրող անբարոյական «խոհմութեան», սաստիկ կծու լեզու մը կը բանեցնեն Օրմանեանի դէմ, որ պէտք եղած դիմումները չընէր: Ժողովականներէն մին նոյնիսկ կը յանդգնի օսմանեան «դէստուրին» մէկ կտորը կարդալ, որու մէջ ըսած է մօտաւորապէս «հետեւեալը. «Երբ անձ մը կը տեսնայ իր պատիւը բռնաբարուած, իր ինչքը կողոպտուած ու իր կեանքը վտանգի մէջ կ'ընայ յաճախ դիմել ինքնապաշտպանութեան ապօրինի միջոցներու: Այդպիսինը դատած՝ ատենը պիտի աչքի առաջ ունենալ մեղմացուցիչ պարագաները»...

Ար հասկցնեն Օրմանեանին, որ այդ իսկ մտքով դիմում մը ընէ. ցուցնէ գաւառներու հայերու քաշած անտանելի նեղութիւնները, անոնց դժօխային պայմանները և առկէ յառաջացած բնական հետեւանքները և այլն... Բայց որո՞ւ կըսես... Խալամ Օրմանեանին:

Շարաթ առտու Օրմանեան դնաց պալատ... Բայց ամէն մարդ խորունկ համոզում մը գոյացուցած է, որ բող մըն ալ ի պաշտպանութիւն վնասուածներու կամ կուռղներու պապանձեալ բերանէն չէ հանած:

*

Նոր լուր մըն ալ:
Լուրեր կը պտրտին որ Օրմանեանի և պալատի մէջ բանակցութիւններ կան հայերէն զօրք առնելու համար, իբր վարձատրութիւն շարդերու ատենէ մնացած ապառիկ հարկերու: Բանակցութիւնները դեռ ևս գաղտնի կը մնայ: Սպասենք լոյս աշխարհ ելլուուն Օրմանեանի փորի դեկրուն:

*

Բարձրագոյն Դուռը կրկին շքաբերականներով դիմեց մեծ պետութիւններուն և հրաւիրեց անոնց ուշադրութիւնը եւրոպական փօստատուներու գործադրած

անկանոնութիւններու վրայ, ըսելով որ այդ փոստաները, հակառակ եղած պայմաններուն, արգիլած թուղթեր, լրագրեր, գիրքեր ու ծրարներ կը փոխադրեն: Այդ շրջաբերականներու արգիլման այն եղաւ, որ տեղւոյս դեպքանները խստիւ պատէրներ խրկեցին իրենց փոստատուներուն հայերէն և թիւրքերէն տպագրած թուղթեր ու լրագրեր տէրերուն չհասցնելու համար: Քամի մըն է կը փչէ...

*

Ռուսական դեսպանը նոր դիմում մը ըրաւ անցեալ օր կայսերական կառավարութեան (դեկտ. 10 ն. տ.) և հրաւիրեց անոր ուշադրութիւնը այն երևոյթին վրայ, որ վանի, էրզրումի և այլ սահմանակից վիլայէթներէն դէպի Վովկաս խուժող հայ գաղթականներու թիւը նորէն կաճի. այդ վիլայէթներու, մասնաւորապէս վանի մէջ տիրող սովի ու նեղութիւններու պատճառով Դեսպանը կառաջարկէ պէտք եղած միջոցները ձեռք առնել այդ հոսանքին ասաջն առնելու համար:

ՎՈՎԿԱՍԵԱՆ ԽԱՐԻԿՆԵՐ

ՈՒԹԵՐՈՂԻ ՆԱՄԱԿ
(Վերջ ութերորդ նամակ)

Պետերբուրգ, 7 հոկտեմբեր

Այդ օրից ուսաց «քրիստոնեայ» կառավարութիւնը բացարձակ, պաշտօնական հաւածաբան սկսեց ոչ միայն հայոց հարցի, այլև առհասարակ «հայկական համալուծութիւններ» դէմ: Արգելեց գրել խօսել, օգնել արգելեց ունէ հանգանակութիւն: Աստիկանական հսկողութիւն սկսեց Վովկասից թիւրքաց Հայաստան և թիւրքաց Հայաստանից Վովկաս անցնողների վրայ: Սկսեցին, վերջապէս, անվերջ խոզարկուած թիւններ, ձերբակալութիւններ, բանտարկութիւններ. Վովկասի գլխաւոր քաղաքների բանտերի քաղաքական բաժինները լցեցին ոչ միայն հայոց ինտելիգենտ հասարակութեան, այլև ժողովրդի բոլոր դասակարգերին պատկանող «յանցաւորներով»: Այս՝ արքայի, դարձեալ բանտարկութիւն, դարձեալ արքայ...

Խստութիւնները սաստկանում էին ըստ առ ըստ: Ամեն ինչ ընկաւ կասկածի, հսկողութեան տակ: Հայերին արգելեցին նոյն իսկ փող, հաց և ապաստան տալ թիւրքահայ գաղթականներին: Մարդասիրական օգնութեան գործը դարձաւ քաղաքական յանցանք: Հայոց թիւններ և բարեգործական հիմնարկութիւններին արգելմամբ հրաւերներ կարգալ և փող հանգանակել յօգուտ փախուստի հայերի և անտուն գաղթականների: Ճշմարիտ խրատական հայերի և անտուն գաղթականների — քարերը կ'աթիւն անել յօգուտ գաղթականների — քարերը կ'աղաղակէին, եթէ թող չտուէր — բայց միևնոյն ժամանակ, կենդանի գործը մեռած տառ դարձնելու համար, նաև, կենդանի գործը մեռած տառ դարձնելու համար, կասեան կառավարչապետին, որին միայն իրաւունք տրեց, որ ստիկանութեան միջոցով, փող բաժանել գաղթականներին:

Բայց գիտէ՞ք ինչ կը նշանակի «ստիկանութիւն» Ռուսաստանում: Դա այնքան երկիր է ազգում ամբոխի վրայ, որ գաղթականները աւելի լաւ էին համարում քաղցած մնալ, քան թէ ստիկանութեան դիմել: Եւ եթէ դիմէին էլ, հեշտ է միթէ Ռուսաստանում հազար ու մի պաշտօնական ձեռնարկութիւններով ծանրաբեռնած հիմնարկութիւնների միջոցով փող ստանալ մի այնպիսի բարձր հիմնարկութիւնից, ինչպէս է կառավարչապետի գիւնատուները: Այդ պատճառով է ահա, որ ճիշդ այն ժամանակ, երբ Վովկասի զանազան կողմերում գաղթականները հալում էին քաղցից կամ փէտանում գոմերում, երբ տարափոխիկ հիւանդութիւնները կոտորած էին անում նրանց շօջանում, — հաւաքած փողերը մնում էին ա՛ն ձեռն մ'խելի՛ կառավարչապետի դիւնատանը, և մինչև այժմ էլ աւելի քան 50 հազար ուրբի մնում է այնտեղ, հաւանօրէն այն միամիտ ենթադրութեամբ, թէ «կարիք չկայ»: Երևի, այդ 50 հազար ուրբին դեռ երկար փակած կը մնայ դիւնատաներում, մինչև որ կը կարգադրի այդ փողը յատկացնել ներքին նահանգներից Վովկաս բերող ուս «գաղթականներին» և կամ մի աւելի աստուծահաճոյ գործի, օրինակ ուսաց նկերեցի կառուցանելու Անդրժանում կամ Բուխարայի խանութեան ունէ քաղաքում...

«Կառավարչական հոսանքը» այնքան փոխեց, որ ոչ միայն թող չէին տալիս նոր բան գրել յօգուտ թիւրքահայերի, այլև շատ գրքեր, որոնք մի քանի տարի առաջ ուսաց ցենզուրայի թողուցութեամբ, տպագրւում էին Թիֆլիսում, արգելեցին երկրորդ անգամ տպագրելու: Այդպէս, օրինակ, Բաֆֆիի «Կայծերը», «Խնթը», «Մամուկը», որոնք լոյս են տեսել Թիֆլիսում և որոնց մէջ ընկանաբար մի հատ բառ անգամ չկայ Ռուսաստանի դէմ, թողուցութիւն չստացան երկրորդ անգամ տպագրելու Ռուսաստանում և այդ պատճառով երկրորդ տպագրութիւնը տեղի ունեցաւ արտասահմանում, Վիեննայի մէջ գտնուող Սխիթարեան միաբանութեան տպարանում: Նոյնը կարելի է ասել և ուրիշ շատ գրեւորների մասին: Փորձ փորձեցին մի քանի գրքեր տպագրել Պետերբուրգում և Մոսկվայում, ուր հայոց տպարաններ կան և ուր, ինչպէս մայրաքաղաքներում, ցենզուրայի պայմանները աւելի թեթեւ են: Բայց անօգուտ: Շատ շուտով Պետերբուրգի գրաքննիչին կարգադրութիւն ուղարկեց շատ խիստ լինել հայերէն գրքերի վերաբերմամբ, և շնորհիւ այդ կարգադրութեան այժմ երազել անգամ չի կարելի նոյնիսկ շատ հասարակ բրօշուրների վերաբերում տպութեան մասին, որոնք մի անգամ արդէն տպագրւել են այնտեղ: Ել չեմ խօսում այն մասին, որ այն, ինչ կարելի է տպագրել ուսերէն լեզուով կամ նոյնիսկ վրացերէն, թիւրքերէն, նոյնը չի կարելի տպագրել պետութեան «համահասարակ» հպատակ հայոց լեզուով, որովհետև այդ «աչքի փուշ» դարձած հայերի մասին ամէն տեղ «առանձին» կարգադրութիւններ են ուղարկւած: Նոյն պատճառով դարձեալ, Թիֆլիսում կամ Վովկասի ուրիշ ունէ քաղաքում ցանկացողը կարող է ուսերէն դասախօսութիւններ կարգալ իսկ հայերէն — երբեք:

Դա էլ արգելւած է:
Աւելի անսխանաձեռն չէ հայոց թատրոնի վիճակը:

Հատ պիտաներ, զլիսաւորապէս պատմական կեանքից վերցրած, արդեւեցին վերջին տարիները: Քառորդ դար կը լինի, որ Թիֆլիսի Հայոց լմատորնը վարդանանց տօնին, — որը, ինչպէս յայտնի է միաժամանակ և եկեղեցական տօն է, — ներկայացնում էր մի պատմական-ժողովրդական ողբերգութիւն՝ «Վարդանանց պատերազմը»՝ ամբողջ թատրոն գրաւելու համար: Այդ պիտանը արդեւեց: Եւ այդ սյն անմեղ պատճառով, որ նրա հերոսը վարդան Մամիկոնեան, որ պարում էր մեզանից 14 դար առաջ, կարող է հայրենասիրական զգացմունքներ ներշնչել Հանդիսականներին: Նոյն տեսակետով արդեւեց և մի այլ ողբերգութիւն՝ «Հուշանկը», որ յատկապէս շատ սիրելի էր Թիֆլիսի ժողովրդին, որովհետեւ մինչև այժմ էլ Թիֆլիսում գոյութիւն ունի այդ կրօնասէր հերոս-օրիորդի անւան ներկած մի եկեղեցի, շրջապատած կրօնական յեղինգաներով: Եւ որպէսզի գաղափար կազմէր, թէ ինչքան երեսնամյակն է այդ կարգադրութիւնը, բաւական է յիշեմ, որ «Վարդանանց պատերազմը», որ տեղի ունեցաւ 5-րդ դարում, քրիստոնեայ հայերի և կապաշտ Պարսկաստանի մէջ մինչև այժմ էլ ազատ կերպով ներկայացնում է Պարսկաստանում, օրինակ, Թաւրիզ քաղաքում, և մի քանի անգամ նոյնիսկ պարսից թագաժառանգը և պարսից մեծամեծները եկել են Հայոց թատրոն՝ տեսնելու այդ ներկայացումը: . .

Իսկ չափից դուրս է, արեւելս չէ՞ . . .
 «Տեղական» խտութիւնները բաւական չէին, ահա Կ. Պոլսից ստացւում է գետնային ներկիզովի մի գրութիւնը, որով նա՛ խոնարհւելով թիւրք կառավարութեան խնդրքի առջև, միջնորդութեան միջոցով առաջարկում է կովկասեան կառավարչապետին «Տարկաւոր միջոցներ»՝ ձեռք առնել, որպէսզի Թիֆլիսի Հայոց մամուլը «գաղափարի Թիւրքիայի դէմ յարձակումներ գործելուց», և առհասարակ «կովկասի հայերը յետ կանգնեն թիւրքաց հայերին գրգռելուց», քանի որ դա «իջացնում է երկու հարեան պետութիւնների բարեկամական յարաբերութիւնները»: Կովկասի հայատեաց իշխանութեանն էլ այդ էր պակաս. իսկոյն խտութիւնները տանապատկեցին և, իրրե հեռեւանք այդ բողոքի, ամբողջ Ռուսաստանը ակնատես եղաւ, թէ ինչպէս 1895 թւականից իվեր հայոց հարցի և առհասարակ հայերի դէմ սկսած հալածանքը քանի գնաց՝ աճեց, զարգացաւ և իվերոյ ընդունեց քաղաքական պատուհանի կերպարանը: . .

Տեղի ունեցաւ պատմութեան մէջ չլուած, չտեսնուած անարդարութիւն: Նոյն այդ դառն օրերին, երբ ամբողջ թիւրքաց Հայաստանում՝ իրագործեց Մեծ Մարդասպանի՝ ահա երի ծրագիրը — կոտորել հայերին՝ Հայոց հարցը արմատապէս սպանելու համար. երբ հարազատ եղբայրների երկրից փչում էր արեան և դիակների հոտ. երբ բննապետի սուրբ անարգել մեռելութիւն էր տարածում մի խաղաղ ժողովրդի հայրենիքի բոլոր ծայրերում, նոյն այդ դառն օրերում, ասում եմ, ողուսահայրին խտուր արդեւեց էր ոչ միայն բողոք յարուցանել, այլ և արտասուք թափել, ոչ միայն օգնութեան ձեռք մեկնել, այլ և լաց լինել: . . Կովկասեան ամբողջ հայութիւնը այդ դառն օրերում, կոտորածների անվերջ ամսների ընթացքում, այդ, չէր կարող բարձրաձայն լաց լինել անգամ, այլ ստիպուած էր, իր մի սարուկ, կուլ

տալ իր աղի արտասուքները, թագցնել իր անսահման վիշտը և կոկիւր: . .

Եւ որպիսի հակապատկեր:
 Ճիշդ այդ ամիսներին էր, որ ամբողջ Եւրոպայում հայկական կոտորածները հրապարակական ընդունեան, անվերջ դասախօսութիւնների և գրելու առարկայ էին: Լոնդոնում բաղամարդ միտնիզներ էին ընում յօգուտ հայերի, իսկ Պետերբուրգում տիրում էր գերեզմանական լուրթիւն: Սասունից փախստական հայերը, հազարաւոր վերատեր անցնելով, հասնում են Լոնդոն և ջերմ ընդունելութիւն գտնում բոլոր շրջաններում, սկսած Հօլլարդլենի գղեկից, ուր Պլադասուն ընդունում էր անտուն ու անտէր ժողովոցի քեկոյններին յուսատու խօսքերով, իսկ Պետերբուրգում՝ գաղթական, փախստական հայը ապաստան չէր գտնում նոյնիսկ «գիշերային ապաստարանում»: Պարիզում հրաւերները յաջողում էին հրաւերներին, գրքեր էին լոյս տեսնում, փողեր էին հաւաքւում յօգուտ որը և քաղցած հայերի, իսկ Թիֆլիսում չէին թող տալիս նոյն իսկ յիշատակել այդ մասին: Ըվլյցարիայում կոմիտէներ էին կազմում յանուն հայերի. Գանիայում ինքը թագուհին անցնում էր հանգանակութեան գործի գլուխը. հետաւոր Ամբրիկայում, մինչև անգամ Կերմանիայում, միսինարական ընկերութիւններ էին կազմում՝ օգնելու մի ամբողջ ժողովրդի խեղճ մնացորդներին, իսկ Ռուսաստանում, այն Ռուսաստանում, որ 1878 թւին Սան-Ստեֆանոյի դաշնագիրը ստեղծեց, անխիղճ ոստիկանութիւնը փորձում էր յետ քշել այն անվիւ գծրախաներին, որոնք հազիւ իրենց կեանքը աղատել էին Կովկասի սահմանը անցնելով: . .

Մի տեղ ովեղութիւն, միւս տեղ թշնամութիւն, մի տեղ օղնութիւն, միւս տեղ հալածանք. մի տեղ բողոք, սպանալիք թիւրքերի դէմ, միւս տեղ լուկեայն հաւանութիւն Երզնի Համիդի ծրագրերին: . .

Հայը կարող է մոռանալ այդ:
 Պատում են, որ Կարինի կոտորածների ժամանակ, երբ նոյն իսկ մահ էր անհասանալ պարսից հրապատուր՝ արտասուքը աչքերին՝ ապաստան էր տալիս փախուղ հայերին, ողուսաց հրապատուր փակում էր անպաշտպան կանանց և երեխաների առաջ հրապատուսարանի դռները, թող չէր տալիս, որ անմեղ երեխաները և յուսահատ կանայք ապաստան գտնեն քրիստոնեայ կայսրութեան զրօշակի տակ: Եւ այդ նոյն հրապատուսարանն էր, որ տարիներ առաջ ճանաչուած էր իրրե հայերի պաշտպանութեան զլիսաւոր օջախը, իրրե հալածական հայերի առաջին ապաստան: . .

Ներկիւ է միթէ:
 Պետերբուրգի տեղեակ շրջաններում այն կարծիքն են յայտնում, որ նիկոլայ կայսրը երկար ժամանակ ոչինչ չգիտէր հայկական կոտորածների մասին: Երբ 1896 թւին կայսրը անցնում էր Վիեննայով, աստրիական ծեղուկի կայսր Յոհան Յոլսեփ չկարողացաւ թագցնել իր անձնակազմին հայկական չտեսնուած ջարդերի պատճառով: Երբ աստրիայի կայսրը չթափաքեց իր զարմանքը: Մի քանի ժամից յետոյ կայսրը յիբաւի համազեց: որ ինքը շատ քիչ անգիկութիւն ունի այն բողոքի մասին, ինչ որ կատարւել էր Հայաստանում 1895 և 1896 թւականներին: Պլադասուն թագցնողը, ինչպէս յայտնեց, եղել էր արտաքին գործերի մինիստր Լոբա-

նով Ռոսսոփսկին, որի մասին այն կարծիքը կայ զիւնազիտական շրջաններում, թէ նա ուղղել էր մի գրութիւն թիւրքաց կառավարութեան, ասելով թէ «Պէտք է կանգնեցնել Հայոց շարժումը, ինչ միջոցով և լինի»։ Եւ, աւելացնում են, Հենց այդ գրութիւնն է, որ առանձին համարձակութիւն էր տւել Մեծ Մարդասպանին աներկիւղ իրագործել իր սոսկալի ծրագիրը։

Պատմում են, որ տեղեկանալով իրողութեանը, Նիկոլայ կայսրը յայտնել էր խորին դժգոհութիւն Լորանով-Ռոսսոփսկուն, և երբ մի քանի օր յետոյ Վիեննայից վերադառնալիս, կայսերական գնացքի վագոնում Լորանով յանկարծամահ եղաւ, շատերը ասում էին. «Նա չգիմացաւ կայսեր խիստ յանդիմանութեան»...

Որքան ճիշդ է այդ կարծիքը, չգիտեմ, այսքանը միայն կ'աւելացնեմ, որ Պոլսի Փրանսիական դեսպան Կամբոն, լսելով Լորանով-Ռոսսոփսկու յանկարծական մահը, բացականչել է. «Լորանով խեղդուեց հայոց արեան մէջ»...

Թոյլ տւէք աւելացնել էլ մի փաստ, քանի որ խօսք եղաւ Նիկոլայ կայսրի մասին Պարիզից՝ իմ մի ծանօթը երկու ամիս առաջ հաղորդեց ինձ նամակով հետեւեալը. Լոնդոնի «Times» լրագրի Պարիզի թղթակիցը, իր թղթակցութիւններից մէկի մէջ հաղորդում է թէ Նիկոլայ կայսրը, լսելով հայկական կոտորածների մասին, նւիրել է յօգուտ հայերի 250 հազար Փրանկ (մօտ 100 հազար ռուբլի), բայց երկու տարուց յետոյ, այն է 1898 թւին՝ կայսրին տեղեկացրին, որ իր նւիրած այդ գումարից և ոչ մի կօպէկ չէ հասցրւած նպատակին — Տարաբախտաբար, ես ձեռքի տակ չունեմ Լոնդոնի լրագրի այդ համարը՝ լուրի մանրամասնութիւնները քաղելու համար, բայց այսքանն էլ բաւական է նկատելու համար, թէ ինչ սոսկալի տրամադրութիւն է տիրում Պետերբուրգի յայտնի «ղեկավարող շրջաններում» գլխի հայոց հարցը, որ թրջ է տալիս մինչև իսկ, կայսրի նւէրը «անհետեւեք թողնել»...

Բայց հերիք է, ընթերցող, կարենք այդ տխուր պատմութեան թելը Միայն թոյլ տւէք ինձ այս համարօտ անտութիւնից յետոյ հարցնել. «Արդեօք հայկական այժմեան տրամադրութիւնների մէջ մեղաւորը անգլիական ինտրիգն է՞րն են, որոնց մասին ես խօսեցի անցեալ նամակում, թէ՞ այն անխոհեմ, անփութ և հարածասէր քաղաքականութիւնը, որ ծաղկելով ծաղկում է ժամանակակից Ռուսաստանում, շնորհիւ մեր «տնասուն քաղաքապետների»։

Չէ՛։ Բարեխիղճ լինելը և առանց խտրութիւն գնելու հայի, ռուսի, լեհի և ֆիննի մէջ, խոստովանելը, որ այդ հարածասէր քաղաքականութիւնն է, որ պետութեան սահմանադրութիւններում «հարցեր» ստեղծեց և բարդութիւններ առաջ բերեց։ Այդ «քաղաքականութեան» շնորհիւ է, որ հայերի նախկին բարեկամութիւնը՝ երէկ արդէն դարձել էր սառնութիւն, այսօր նա արդէն դառնում է ատելութիւն, իսկ վաղը կարող է փոխել թշնամութեան։ Իսկ դրա տխուր, անցանկալի և վնասակար հետեւեալը...

Այդ գուշակելու համար կարիք չկայ Դաւիթ մարգարէի խելքը ունենալ. դրա համար բաւական է և մի սաստիկի սօվետնիկի խելքը...

Լ. Ա. Կ. Ն. Ս. Ն.

Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

* * *

«Դրօշակ»-ի խմբագրութիւնը, ամսիս 11-ին ուղարկեց «Սօսկոփսկիեա Աեկոմստի» թերթի և մի քանի ուրիշ ռուս լրագրերի խմբագրութիւններին, տպելու համար, հետեւեալ հերբումը.

«Սօսկոփսկիեա Աեկոմստի» լրագրի № 133-ում տպւած էր «Հայկական ցնորքները և Ֆինլանդիան» վերնագրով և X. ստորագրութեամբ մի յօդւած, որի մէջ, իմիջի այլոց, հերկնակն ասում է հետեւեալը.

«Դրօշակ լրագիրը ուղղակի յայտնում է, թէ «մեր (հայոց) նպատակները բարբոթին նոյնն են, ինչ որ ձեր (ֆինլանդացիների) նպատակները, և և ձեր գրութեան բարեքումը մենք համարում ենք բարեքումն և և մեր գրութեան Մենք ու դուք մի ընդհանուր թշնամի ունենք — Ռուսաստանը և մենք ու դուք մի ընդհանուր ինդիր ունենք վնասելու — ոչնչացնել (sic) այդ թշնամունք»։

Դրօշակի խմբագրութիւնը հարկաւոր է համարում յայտնել, որ այդ ամբողջ, չակերտների մէջ դրւած, հատւածը յօդւածագիրը հնարել է իր գլխից։ — Դրօշակում չկան ոչ միայն պր. X.-ի բերած դարձուածքները, այլ և ոչ մի նախագասութիւն նրանց նման, և ընդհանրապէս ոչ մի կոչ ուղղած ֆինլանդացիներին։

Ինչ վերաբերում է յօդւածագրի կողմից մեղ վերագրւած ցանկութեան՝ ոչնչացնել Ռուսաստանը, իբրև հայերին թշնամի ատելութիւն, թերևս հետաքրքրական լինի ձեզ համար իմանալ, որ մինչև վերջին ժամանակներս Դրօշակը շատ քիչ էր զբաղւում ռուսահայերի գրութեամբ և որ միայն այս տարւայ յունար ամսիցն են սկսել տպել նրա մէջ «Պոփկասեան խարբիկներ» վերնագրով նամակները, որոնց առաջինը մեր աշխատակիցը վերջացնում է հետեւեալ խօսքերով.

«Իայդ դա չի նշանակի, թէ այս սողերի գրողը ներշնչւած է թշնամութեամբ դէպի Ռուսաստանը և նոյնատիպապէս Ես ռուս ժողովրդի սնկեղծ բարեկամ եմ և շատերի հետ չեմ ուրանում այս փաստը որ կողմաբ Ռուսաստանի շնորհիւ յարկը եւրոպա, կան քաղաքակրթութեան և բայց այդ խոստովանել չի նշանակում լսել և և թաղանջ ընտելան և անարդարութեան ստեղծի փաստերը, որոնք ոչ միայն ճշոււմ են փոքրիկ աղբիւրի, այլև տրամաւորեթով Ռուսաստանի համբարը, չլատում են նրա ներքին զարգայումը»։

Աւելորդ ենք համարում կանգ առնել պր. X.-ի յօդւածի մնացեալ մասերի վրայ, որովհետև նրանց մէջ չի տրւած Դրօշակի անունը. այնքանը կ'ասենք միայն, որ այդ մասերում էլ յօդւածագիրը առանց քաշելու չակերտների մէջ է դնում իր հնարած նախադասութիւնները։ Սակայն սե Ա.Օ. disce omnes.

* * *

Փրանսիայում վաղուց նկատուած է հասարակական կարծիքի մի զօրեղ հոսանք, որ դատապարտում է ֆրանսիական դիւանագիտութեան բռնած դիրքը վերջին աս-

րինքերի հայկական դէպքերի վերաբերմամբ: Այդ հասանքի զլնաւոր ներկայացուցիչները պատկանում են արմատական և ընկերավարական կուսակցութիւններին, որոնք սկսել են վերջերս մեծ կշիռ ստանալ Քրանսիայի ղեկավարող շօջանների մէջ: Սակայն այդ կուսակցութիւններից դուրս էլ այդ հայասիրական շարժումը գտնում է զօրեղ պաշտպաններ: Անհրաժեշտ ենք համարում այդ տեսակետից շեշտել մանաւանդ այն փոփոխութիւնը, որ նկատուում է Temps-ի պէս անուղղելի օպպորտունիստ թերթի մէջ, որ ներկայացնում է Քրանսիական գործիչների չափաւոր և մինչև այժմ գերիշխող տարրերը:

Քրանսիայի կողմից ևա Հէյի դեսպանաժողովը ուղարկւած պատգամաւորներից մէկը դէստուրնէլ դը Կոնստան գրում է, խիղի ալոց, այդ թերթում:

«Այն իբր ինքնամիտիման եւ ձեռնպահութեան քաղաքականութիւնը, որին հետեւեցինք Եգիպտոսի եւ Հայաստանի վերաբերմամբ, որքան էլ յայտարար լինի ներկայի համար, վտանգում է մեր ապագան եւ արդէն ցոյց է տուել իր դառն պտուղները»:



Հակակցերական, բայց օպպորտունիստ Գամբետտան ասել է մի ժամանակ, թէ «հակակցերականութիւնը արտահանելու պարանք չէ»: Մինչև այժմ էլ այդ սկզբունքով է ղեկավարուում Քրանսիան, որ կարծում է թէ կաթօլիկ կղերը ամենալաւ միջոցն է Քրանսիական ազդեցութիւնը Արևելքում տարածելու համար: Գժւար է անելի անհեթեթ կարծիք ունենալ իրականութեան մասին, գոնէ որքան հարցը վերաբերում է հայերին, և վերին աստիճան ուրախալի է տեսնել, որ իրենք Քրանսիացիք սկսում են նկատել մեծ Գամբետտայի մեծ սխալը: Այդ առթիւ մենք թոյլ ենք տալիս մեզ բերել այստեղ մի հատուած Aurore-ում տպւած մի յօդուածից, որ պատկանում է հայութեան բարեկամ Իւրբէն Գօհիէի գրչին:

«Յայտնի է, թէ ինչպէս են օգտուում կաթօլիկ կրօնականները Քրանսիայի հովանաւորութիւնից: Նրանք հալածուած հայրիկն դնում են այնպիսի դրուժեան մէջ, որ նրանք ստիպուած են լինում ընտրել մահ կամ հաւատարացութիւն: Քրանսիայի արեղանների վանքերը ապաստան են տալիս այն հայերին, որոնք համաձայնում են թողնել իրենց դաւանութիւնը եւ մտնել կաթօլիկ եկեղեցու ծոյր: Միւսներին նրանք թողնում են Աբդիլ Համիդի մարդասպանների կամքին: Այս տեսակ գարշիլի վարմունքով Հուսի գործակալները ատելութիւն եւ արհամարհանք են տարածում դէպի Քրանսիան մեր հին հովանաւորեալների մէջ»:



Ինչպէս յայտնի է, սուլթանի պահանջով դատի են ենթարկւած Պարիզում Aurore թերթի երեք հայասէր աշխատակիցները՝ Իւրբէն Գօհիէ, Պիէռ Քիլառ և Շ. Մալաուո: Գրանցից մէկը, պ. Քիլառ տպել է հետեւեալ բաց նամակը ուղղած սուլթանին:

«Նամակ Մեծ Մարդասպանին»
Ընկեր Աբդիլ Համիդ

Ի՞նչ բարեհաճել ևս հրաման արձակել որ մեզ դատի ենթարկեն ջո վիլայէթ Paris-en-Paris-ի պատմական ասանուում:

Այն երախտագիտութեւնը, որ մենք պարտական

ենք քեզ, աղոյիտով մեզ միջոց տալու է համար լիովին հրապարակելու այն մարդասպանութիւնները եւ կուսորածները, որոնց համար դու արժանացել ես արդէն Կարմիր-Գազան անուն, չի կարող մեզ ստիպել լռելու ջո այժմեան չարագործութիւնների մասին:

Գու յայտնում ես աշխարհին ջո դեսպանի լեյնով, թէ ջո աներորդի Մահմուդ փաշան խելագար է, թէ նա փախցրել է իր կնոջ անչափահաս ազաներին, եւ թէ վերջապէս նա խաբէութեամբ փող է կորցրել մի անդլիսական ընկերութիւնից, ցոյց տալով իբր թէ ինքը մեծ վարկ ունի ջո առաջ:

Բողոքն էլ սուտ, ընկեր Համիդ Մահմուդ փաշան խելագար չէ, այլ պարզապէս ազատամիտ. նրա տարած անչափահասները երկուսն էլ ամուսնացած են եւ ընտանիքի հայր, իսկ ինչ վերաբերում է ջո մօտ ուղէ վարկ ունենալով պարծենալուն, նա այդ չէր կարող անել. — դու շատ լաւ գիտես, որ նա միակն էր ջո աներորդիների մէջ, որ տարիւնակէր խլեր չէր համաձայնում զո սէլակիքներին, եւ որ նրա այդ առիտարտ բացակայութիւնը բաւական պարզ վկայում էր, թէ նա ուղում է ցոյց տալ քեզ իր այդամարմանքը:

Մի ուրիշ բան եւս Մահմուդ փաշան առաջինը չէ, որ փախչում է քեզից: Գո զոներից մի ուրիշն էլ է ելել Պարիզ, տիկին Չէքիէ-հանումը, որի ամուսինը Իսմայիլ բէյ եօթ ամիս առաջ բանտ է ձգւել, որովհետեւ երեւան է հանել մարէշալ Չէքի փաշայի կաշառակերութիւնը: Երբ Քրանսիական դեսպանատան թարգմանը միջամտեց եւ արգարութիւն պահանջեց, դու պատասխանեցիր, «Չեմ սիրում Իսմայիլ բէյին»: Պատահաբար այդ անգամ դու ճիշդ խօսեցիր. դու գերազանցում ես Չէքի փաշային, վարձկան մարդասպանին, որ երբեմն աներեց Սասունը եւ Գէլէ-Գիւզանում քչեց դէպի նրանց դիակների համար պատաստած փողը եւ կու է հարկւր անդէն հայերի, որոնց դրուել էր խոստումներով, եւ հրամայեց զինուորներին կուտորել նրանց սրերով ու սուլիններով:

Գարձեալ մի ուրիշ բան Գիրայից Սըրանա-մա-կեղծական սարերում ապստամբում են: Մի գուրէ ուղում ես ուղարկել նրանց դէմ ինչպէս 1879 թիւն մի ամբողջ զօրաբանակ, ջնջել նրանց կամ կայսմաւորի նրանց պետերին, ինչպէս արեց այն ժամանակ Դէրվիշ փաշան: Ժամանակը ամենեւին յարմար չէ այդ պիտի գործերի համար. բաներդ վատ են, բարեկամ միւսիւման հպատակներդ հաւար էլ դու նոյնքան անտանելի, նոյնքան զգուշի եւ դարձել, որքան քրիստոնէս հպատակներից: համար:

Վերջապէս, յուրախութիւն ջո, վանում եւ շատ ուրիշ անգրում սուլթ. աւելի խիտ ջոն անցաղ տարի, վերջացնում է ջո աներուն գործը: Ես կը խօսեմ դրա մասին մի ուրիշ անգամ եւ դու զուր պատած չես լինի, — կարող ես բողոքովին վտան լինել ինձ վրայ, որովհետեւ ես միշտ աշխատում եմ լինել բարեխիղճ պատմագիր ջո Արեւնաշաղախ Անամուտեան:

Պիէռ ԳիՅՍՈՒ

Յուսանք, որ յարգելի հրապարակախօսը ստիպւած է լինի հիասթափւել այդ «ազատամիտ» թերթի վերաբերմամբ, ինչպէս շատերը հիասթափւել են շատ ուրիշ «ազատամիտ» թերթերի վերաբերմամբ:



Պարիզի լրագիրներում տպւած է La Ligue des droits de l'homme կոչուող հզօր կազմակերպութեան կողմից հետեւեալը:

«Մարդկային իրաւունքների պաշտպանութեան դաշնակցութեան կեղծական կոմիտէն, յուղւած Հայաստանից վերջերս հասած ծանր լուրերից, ցանկութիւն է յայտնում, որ հասարակապետութեան կառավարութիւնը վճճի արգելել այն կատրածների վերանորո-

գուժր, որոնք 1896 թ.ին ջարդեցին մի անպայտական ժողովուրդ եւ վշտով Երկին ամբողջ մարդկութեան սիրտը»:

* * *

Ասորո՛ւում տպեցին մի շարք համակրական և քաջալերական նամակներ ու հեռագիրներ, ուղղւած այդ լրագրի խմբագրութեանը այն դատի առթիւ, որ սկսել է նրա դէմ անամօթութիւնը իր համար արհեստ շինած Արդիւլ Համիրը:

Ահա այն նամակի թարգմանութիւնը, որ ուղարկեց «Դրօշակ»ի խմբագրութիւնը այդ հայասէր թերթի սնորէն պ. Աօգանին:

Պարոն սնորէն,

Հայ յեղափոխական («Դրօշակ») թերթի խմբագրութիւնը պատիւ ունի յայտնել ձեզ իր խորին համակրութիւնը եւ հորհակալիքը այն արի կուրի համար, որ դուք մղում էք այնքան անչափաէր կերպով, յանուն արդարութեան ու ճշմարտութեան, ընդդէմ բարբարոսութեան և լրբութեան մի դիւստրի փափուկա՛հի, որ կտորել էր տեղի հազարաւոր անմեղներ եւ որի ճակատին մարդկութեան խիղճը խարանել է Մ Ե թ Մ արդասպան անուհի:

Ամօթ է քաղաքակրթութեան եւ ճարտարագիտական ազատութիւն տալ այդ մարդկութիւնից նշաւակւած փեհայեան դատի ենթարկել ձեզ յանուն արդարութեան, որի անունը անգամ թող չի տալիս ինքք, այդ անարգ վեհապետը, արասանել իր նզովեալ տէրութեան մէջ:

Իսկապէս իրեն սուլթանին, այդ Աստու պատուհասին, պէտք է ենթարկել դատի իր անթիւ եղիւնապործութիւնների համար, եւ ոչ թէ այն մարդկանց, որոնք լի հրաշալի եւ ազնիւ գայրոյթով արձագանք են դարձել ճշւած ու հալածւած ազգերի:

Թ Ե Ր Թ Օ Ն

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՔԱՆԱՊԱՐԳԻՆ

(սիւր արար արարեստի օրօշարար)

I

ԲՕՆՏԱՊԵՏԸ

Վէս-գիշեր էր: Բանտում ճնշող լուծիւն էր տիրում միայն պահապանի համալսի քայլերի ձայնն էր լսում միակերպ, անընդհատ: Ջրանների դռների վրայ բացւած փոքրիկ կոյոր ծակերը սկսին էին տալիս նախասնեակի կիսախաւարի մէջ. պահապանը դաւադիրի հայեացքով մերթ ընդ մերթ աչք էր ձգում նրանց վրայ, որոնք կարծես մահու աչքեր լինէին իր վրայ ուղղւած:

Լոյս կար միայն բանտապետի սենեակում: Այնտեղ երկու մարդ նստած էին սեղանի հանդէպ և նայում էին առաջները փուած մի թերթ թղթին: Բանտապետն էր այն և իր օգնականը. նրանք մատիտով նշանակում էին թղթի վրայ այն բանտարկեալների անունները, որոնք վաղը դատարանին պիտի ներկայանային:

Ջրը՛նգ, զորը՛նգ, զորը՛նգ...

— Օ՛հ, դարձեալ բացականչեց բանտապետը, մատիտը ձեռքից վայր ձգելով:

— Ի՛նչ է այդ, հարցրեց ընկերը:

— Մի նոր բանտարկեալ որ իր շղթաների ձան-

ձրալի զբընգոցով ահա մի քանի օր է, որ իմ հոգին հանում է:

— Ինչո՞ւ է այդպէս աղմուկ անում:

— Ես գիտեմ՝ ինչու. անդադար շարժւում է իր շան բնում, աշխատում է շրջել «մուտառ գեաւուրը» և ինձ հանգիստ չի տալիս: Սատանան տանի սյս պաշտօնը,— և նա բուռնցքով պիտի խփեց սեղանին. այսքան տարի այստեղ եմ և այդ դժոխային ձայնին չսովորեցի:

Ջրը՛նգ, զորը՛նգ, զորը՛նգ...

Սրկին լուեց նողկալի շփոթը, այս անգամ աւելի բարձր, աւելի որոշ:

Չե՛մ կարող որոտաց բանտապետը. չեմ կարող ոչինչ անել երբ լսում է այդ ձայնը: Երէկ գիշեր աչք չեմ խփել այդ անհեծած զբընգոցից:

Օգնականը սկսեց ծիծաղել:

— Ինչո՞ւ ես ծիծաղում:

— Ինչու եմ ծիծաղում, եփած հաւն էլ կը ծիծաղի, եթէ նրան ասեն, որ գայլը դողում է ոչխարի բառաչեցի: Տօ՛, բարկանալ ու անհանգիստ լինելս ո՞րն է, լուեցրու էլի:

— Լուեցնե՛մ, հեշտ է ասել, բայց ի՞նչպէս լուեցնեմ:

— Հրամայի, որ քնի:

— Բայց եթէ չե՞ք քնում:

— Քնացրու. միջոց չկայ, ապա սրանք ինչու՞ համար են,— օգնականը ձեռքը մեկնեց դէպի պատից կախած հասա չւանները երկաթեայ գունդը ծայրերին:

Օգնականը նոր էր ստացել իր պաշտօնը. ոճիր գործելու յանցաւոր եռանդը փայլում էր նրա վագրային աչքերում: Երևի՛ ոճիրի թարմութիւնն էլ գրաւիչ է:

Ջրը՛նգ, զորը՛նգ, զորը՛նգ... կրկին լուեց ժանգոտ երկաթի սարսեցուցիչ շփոթը: Բանտապետն այս անգամ մի փոքր մտածեց, շղթանքները կծոտեց և դայրոյթով դուրս գնաց: Նա դիմեց դէպի այն գնդանի դուռը, որտեղից լսում էր ձայնը: Բաց արեց դռան վրայի փոքրիկ անցքը և կանչեց որոտագին.

— Է՛յ, շու՛ն գեաւուր, ինչո՞ւ հանգիստ չես մնում:

— Բայց ես ոչինչ չեմ անում, լուեց ներսից:

— Ինչո՞ւ ես զբընգոց հանում անդադար:

— Այդ ձեր աւած շղթաներն են շառահում:

— Ինչո՞ւ ես շարժւում, որ ձայն հանեն:

— Ապա ի՞նչ անեմ:

— Քնի՛ր, քնի՛ր ասում եմ, թէ չէ...

Բանտարկեալը լուռ էր:

Քնի՛ր, հեշտ է ասել — մտածում էր բանտարկեալը. բայց կարող է քնել ազատութեան վատարախաղ զինուորը, որ կենդանի թաղւած է մտալ գերեզմանի մէջ և համոզւած չէ, թէ իր ստրուկ հայրենիքի բոլոր ցաւերը, դարաւոր վերքերը, արցունքն ու հեծեծանքները իր հետ միասին յաւիտեան թաղում է նոյն գերեզմանի մէջ:

Հայդուկի կուրծքը հրաբուխ էր, գլուխը՝ մաքրի ծով բանտը՝ նեղ, շղթաները՝ ծանր, միայն նրանց շփոթն էր — ահագին բուռնութեան յաղթանակի զարհուրելի երգը, որ աշխարհի սկզբից հնչում է քարաշէն մութ կամարների տակ, ուր աղառութիւնը գալարւում է ու մուչում տիեզերական անմահ ոգուն յանձնելով պատմել իր փրկարար խոհերն աշխարհին:

Ա՛յսպէս էր բանտարկեալը և նա չէր քնում:

Բանտապետը հեռացաւ, իսկ բանտարկեալը մի փոքր

կանգ առաւ, մտածեց և ապա կրկին շարժեց: Բանտը ներք էր, շրջել չէր լինում. նա աշխատում էր պատերի տակից փոքրիկ շատ փոքրիկ պտոյտներ կազմել. . . Նւ շըլ-թաները շառաչում էին, և խաւարն աղմկում էր, զըրը՛նգ, զըրը՛նգ, զըրը՛նգ. . .

— Աւղո՛ւց է բերած այդ անպիտանը, հարցրեց օգնակաւորը, երբ բանտապետը կրկին ներս մտաւ:

— Երեք օր առաջ որսացին Թօփրախագալէից: Չարերիցն է, քնկել չի կարողանում. կարծեմ, տակը շատ բան կայ, միայն ոչ ոք չի ձանաչում, ո՞վ է, ո՞րտեղից է:

— Ուրեմն կը բարձրանայ:

— Կախաղա՞մ. իհարկէ, եթէ հաստատուի: Բայց ի՞նչ տղամարդ է:

— Այդպիսինն քն գնացել. . .

Նրանք լռեցին. խօսել չէր լինում. նիւթը յարմար չէր. ոճիրների մասին շատ չի խօսւում. երևի սեփական ձայնը զղեկի է այդ ժամին. այլ են մտքերը:

Այդ լուսթիւնը կրկին ընդհատեց շղթայի նոր շառաչումով:

— Սպասիր մինչև լոյս, գեա՛վուր, մեծուց բանտապետը, սպասիր. . .

Օգնակաւորը վեր կացաւ, բարի գիշեր ասաց, դուրս գնաց: Բանտում կրկին լուսթիւն տիրեց, որ սակայն դեռ երկար ժամանակ մերթ ընդ մերթ ընդհատում էր շղթաների զարհուրելի շփոթով. — զըրը՛նգ, զըրը՛նգ, զըրը՛նգ:

Լուսացաւ. Բանտարկեալներին նախաձաշ տալու ժամն էր:

— Հիմայ դու յաւիտեան կը քնես, գեա՛վուր, մըմուռում էր բանտապետը, մի աման կերակուր ձեռքին ուղղւելով դէպի անհանդիսա բանտարկեալի խուզը:

Բուռը բացեց, ներս մտաւ, կեղտոտ հեղուկը՝ դրեց գետին:

Բանտարկեալը քնած էր տակաւին, ուստի նա ըղձուկութեամբ դուրս եկաւ, կրկին դուռը փակեց, բայց չհեռացաւ դռնից, կամ՝ աւելի ճիշդ՝ չկարողացաւ հեռանալ: Մի անորոշ բայց հլօր զդացմունք նրան մխեց իր տեղում: Նա աչքը դրեց դուռն փոքրիկ ծակին և անթարթ նայում էր ներսը առանց կարողանալու յետ քաշել: Բանտարկեալի կերպարանքը սքանչելի էր ու վեհ: Բաց լայն ձակատ, պայծառ ու շքեղ, ինչպէս իր տակ ծածկւած մտքերը. շլուտ դէմք, եղերւած թաւ, լայն միտքով փուլած առնական կրծքին, որ վեհութեամբ բարձր ու ցածր էր լինում: Ամբողջ պատկերն իր մէջ մի բան ունէր, որի առաջ՝ բանտապետն իրեն ընկճած էր զգում, կրօնական երկիրդի պէս մի բան էր զարթնում նրա սրտում: Նա աշխատում էր յետ մղել իրենից նոր զգացմունքը, որ դեռ երբեք նրա մէջ չէր ծագել սրանից առաջ: Ոչ, ոչ, նա նրան չի խղճում: Ահա նա կամացուկ կը վերկենայ, կը մօտենայ կերակրին, մկի, երկու գգալ և թոյնն իր գործը կը տեսնի. թող այնուհետև չքնի. թող չքնի, եթէ կարող է: Այսպէս էր մտածում բանտապետը, նայելով քնած երիտասարդին: Բայց ինչո՞ւ էր մնացել կանգնած, ինչո՞ւ չէր հեռանում գնում, այդ ինքն էլ չգիտեր և աշխատում էր այդ մասին չմտածել, նշմարել աշխատում էր ինքն իրեն հաւատացնել, որ մնացել է հրոճւելու զոհի մահաւան տեսարանով, նրա գալարումներով, նրա հառաչանքով:

Նա խարում էր իրեն:

Ահա բանտարկեալը շարժեց, աչքերը տրորեց, նստեց, շուրջը նայեց: Զարմանալի բան. բանտապետը սկսեց գողալ. նրա, ծնկները ծարւում էին, ուրեմն ոճիրի առաջ հրձուկու քաջութիւնը սո՛ւտ էր. բայց չէ՞ որ նա շատերին է թուճաւորել: Բանտարկեալը վերկացաւ, շղթաները հանեցին իրենց վաղեմի շփոթով, բայց բանտապետն էլ չջարպացաւ, նա սոսկում էր. ինչու. այսօր առաջին անգամն էր նա իր ձեռքով թուճաւորում մէկին. նախորդներն միայն իր հրամանով էին կատարել:

Ահա բանտարկեալը մօտեցաւ կերակրի մամնին. բանտապետը տեսաւ այդ և բռնեց նրան. երկրացին, նա յիւնեց դռանը չընկնելու համար: Ահա գոհը ձեռք առաւ գդալը ամենայն խաղաղութեամբ, կարծես մի շատ սովորական գործ էր կատարում: Բանտապետն այժմ դժարանում էր նայել. նա ուզեց յետ քաշել, չկարողացաւ. նրա կոկորդը սկսեց չորանալ. . . Ի՞նչ էր արել նրան, բանտապետին, այդ հոյակապ տղամարդը: Այդ չքնաղ պատկերը, այդ հրաշալի, բոցոտ աչքերը, այդ ամբողջ երիտասարդ կեանքը՝ ինչո՞վ էր այժմանի այդ մեծ ոճիրին: Ինչո՞ւ էր ուղում նա վերջ տալ այդ կեանքին և այն՝ ամենազղելի եղանակով, թոյնով. . .

Բանտարկեալը չէր կարող դուշակել բանտապետի մէջ կատարող այդ ներքին կոխը և նրա պատճառը. նա գդալը կերակրի մէջ կոխեց, պատրաստում էր բերանը տանել, երբ երկամէ դուռը դղրոցով բացեց և բանտապետը ներս վաղելով բռնեց նրա ձեռքը՝ գոչելով:

— Կաց. . . կաց. . .

Նրա գէմքը սարսափելի էր: Բանտարկեալը զարմացած նայում էր այդ մարդուն:

— Կաց, ճչաց կրկին բանտապետը. — նա հեռում էր, նա խեղդւում էր շնչակտուր. — չեմ կարող կաց, շարժիր այդ շղթաներդ որքան կ'ուզես, թող նրանք շառաչեն յաւիտեան, բայց այդ մի՛ կեր, ես էլ չեմ կարող: — Նւ նա խից ամանն ու գդալը, շտապով դուրս փակաւ և դուռը փակեց:

Բանտարկեալը հասկացաւ. նրա դէմքին մեղմ ժպիտ փայլեց՝ որպէս վերջաղայի տխուր շողք. նա հրձուկ էր. — քարէ կամարի տակ, երկամէ դռան յետևում, ժանգոտ շղթաների մէջ՝ նա յաղթանակում էր. . .

II

»Ը Ն Կ Ե Ր Ը«

Անցան օրեր և շաբաթներ: Ցերեկ էր. Զըրը՛նգ, զըրը՛նգ, զըրը՛նգ. նշն շղթաների շփոթն էր, որ այս անգամ հնչում էր Ա. քաղաքի փողոցներում: Փայլիլուն սուրբների արանքից մերթ ընդ մերթ երևում էր մի գունատ դէմք. նոյն բանտարկեալն էր, որ տարւում էր դատարան:

Զըրը՛նգ, զըրը՛նգ. . . Օրը ցերեկով էլ այս շփոթը սոսկալի է. դռներ կան, որոնք զգուշութեամբ փակւում են, լուսամուտներ, որոնք շտապով ծածկւում են. մի ամբողջ երկրի բողբոջն է, որ հառաչելով անցնում է փողոցներով և մարդիկ ծածկւում են սարսափով: Ահա դատարանը. շատ են. . . դատաւոր, քննիչ, գրագիր: Այստեղ են նաև բանտապետն ու իր օգնակաւորը:

«նա չարի. ես անպարտ եմ, դուք գիտեք», մոռում էր բանտապետն իրեն իրեն...

Դատաւորը գիմում է մեղադրեալին.

— Դո՞ւ ես Ա... լցի Ա...

— Ոչ, ես Ա... լցի չեմ:

— Ք...ը քո ընկերն է:

— Ես նրան չեմ ճանաչում:

— Ք...ին դո՞ւ ես սպանել:

— Այո՛, նա իմ թշնամին էր:

— Զէնքերը դո՞ւ փոխադրեցիր Շ...

— Ոչ, ես չեմ փոխադրել:

Բանտապետի օգնականը, որ մինչև այդ շեշտակի նայում էր մեղադրեալին, այժմ մտակցաւ դատաւորին, մի բան փոփոսաց նրա ականջին, այսպէս նրա զլխի նշանի վրայ մտակցաւ, կանգնեց մեղադրեալի առաջ, մտա, մտա, բոլորովին մտա:

Դատարանում լուսթիւն տիրեց. ամէնքը սպասում էին ինչ որ անսովոր և նոյնիսկ զարհուրելի բանի և հայեացքներն ուղղել էին այդ երկու մարդին, որ դէմ առ դէմ կանգնած նայում էին իրար՝ ինչպէս շատ տարիների քէնով լցած թշնամիներ: Երկու գեմքեր չէին նրանք, այլ չորս աչքեր միայն, կամ՝ աւելի ճիշդ՝ չորս բոցեր, որոնք աշխատում էին դուրս ցայտել խուռչներից և այրել հակառակորդներին:

Հանդիսատեսները սկսեցին սարսուռի պէս մի բան զգալ. ինչ որ պիտի կատարէր, շատ էր անսովոր, շատ էր ահաւոր:

Հակառակորդները շարունակում էին նայել իրար... նրանց չափ աչքերը չէին թարթում, իրար վրայ սղմած շթնուկները չէին շարժւում, յծնքերը չէին խաղում, ձայն չէր լսւում, խօսք չէր արտասանւում, նրանք միայն հեռում էին և նայում, նայում էին և հեռում, մէկը շղթաների մէջ, բայց հպարտ ու սրբազան զայրոյթով բռնած, միւսը տաճիկ պաշտօնեայի համազգեստով և դործելիք ոճիկի հանդէպ շիոթեալ, գողգոջուն: Այստեղ էր կատարւում իսկական Դատաստանը, նա, որ շեկացած կրկանով խարան է գնում խիղճերի վրայ:

Յանկարծ բանտարկեալը յետ քաշեց, շղթաները հնչեցնելով, և այնպէս զուանքով դարձրեց երեսը իր հակառակորդից, որ վերջինը ցուրտ զրաց թիկունքում, երերաց և հագիւ կարողացաւ թոթովիլ:

— Ես... ես... քեզ ճանաչում եմ, դու Ա... ն ես:

— Այո... մոռնաց մեղադրեալը... դու իմ «ընկերն» ես եղել...

«Ընկեր»... սարսափելի էր. այդ բառը մարմին առաւ և հրէշաւոր այլանդակութեամբ ցցեց օգնականի առաջ. նա այժմ տեսնում էր իրեն զղւելի մանրամասնութեամբ, տեսնում էր և վախենում իր պատկերից: Որքա՞ն արիւն ծախեց իր փայլուն կոճակների համար: Նա ակամայ ձեռքը դրեց մի կոճակի վրայ, սառն էր. յետ քաշեց: Քանի՞ տարի շարունակ նա գաղափարի ընկեր էր ձեռքեղ այս շղթայակապ հերոսի հետ. քանի՞սին խարել օձի նենգութեամբ, իսկ այժմ... նա շօշափեց իր սուրը, կրկին յետ քաշեց ձեռքը, և ակամայ նայեց իր նախկին ընկերոջ ծանր շղթաներին: Որն էր լաւ տաճիկ պաշտօնեայի սուրը, թէ հայրենիքի փրկութեան նահատակի ժանգոտ շղթաները... Այս հարցը, որ նա վաղուց վճռած էր համարում, այսօր կրկին ցցեց նրա առաջ. ինչո՞ւ... Ո՞վ կարող է

չափել մարդկային սրտի խաւար խորութիւնը, ուր շատ անգամ ոճիրների կողքին քնած են հաղար ու մի առեղծւածներ...

Դարձեալ դիշեր, մի մառյլ գիշեր: Մե երկնքի տակ անհանգիստ քամին էր աղմկում խաւարի ծանր լուսթիւնը:

Օգնականը դէպի բանտն էր գնում, բանտապետը կանչել էր: Նրա քայլածքը նախորդ օրերի աշխոյժը չունէր, խաւարն էլ լաւ չէր, քամին էլ լաւ չէր, դրսում ոչինչ լաւ չէր: Նա մտածում էր այնպիսի բաներ, որ կը գերադասէր չմտածել: Այս առաւօտ, ինչքա՞ն աշխատեց թագնելը երբ Ա... բարձրանում էր կախաղան. չեղաւ: Նա կարծես յատկապէս իրեն էր փնտրում, գտաւ և նայեց, էլի այնպէս, ինչպէս դատարանում, զգանքով. կարծես նա ուղից մահից առաջ իր ճակտին յաւիտեան գրոշմը այն սուսակի, թունաւոր հայեացքը, որից իր արիւնը սառում էր: Ահա խաւարի մէջ երկու փայլուն կէտեր, — երկու աչքեր են. նա կանգ առաւ, մտքերի թիւը կտրեց, այժմ յիշեց աչքերը. ճիշդ այդպէս են, մեծ, լայն, նա վախենում էր. ի՞նչպէս առաջ գնալ... մի փոքր մտածեց. աչքերը փակեց. երբ բացեց, փայլուն կէտերն այնտեղ էին, այժմ աւելի մեծ, աւելի պսպղուն... Ճարը կտրած նա վրայ վաղեց. աչքերն անյայտացան. մի կատու էր, որ փախաւ: Նա ժպտաց իր վախկոտութեան վրայ, բայց և սյնպէս շուտ շուտ գնաց:

Ահա նա բանտի բակումն է. վերջապէս. նայեց դէպի այն կողմը, ուր այս առաւօտ կախաղանն էր, նա համուգած էր, որ դիակը թաղած, ամեն ինչ վերջացած կը լինէր. բայց... նա սառած մնաց, — դիակը դեռ սպիտակին էր տալիս խաւարի մէջ և ամեն անգամ, երբ քամին ուժով խփում էր, կախաղանի սիւները ձուճրում էին ծանր, ողբաձայն, ինչպէս սիրելիի վրայ ողբացող սգաւորներ, կամ ծանր ցաւից հեծող թշուառներ: Ինչ քամին տանում էր այդ ձուխնը աշխարհին յանձնելու համար:

Ճանապարհն անցնում էր հէնց կախաղանի տակով. նա վազեց առանց վեր նայելու, բայց քանի մտանում էր կախաղանին, այնքան քայլերը ծանրանում էին. քամին չի թողնում, մտածեց նա: Ստիպւած եղաւ ծանր գնալ. առանց կարողանալու աչքերը հեռացնել կախաղանից, ծանթ մ սարսուռը կրկին անցաւ նրա մարմնով: Վերջապէս դողալով նա մտաւ բանտապետի մօտ: Այստեղ լաւ էր. գոնէ կենդանի մարդ կար: Բանտապետը վերեւ չնայեց, նա մտախոհ էր: Լուռ էին:

— Հիմա՞ խօսմ հանգիստ ես, ասաց օգնականը ճշնշող լուսթիւնն ընդհատելու համար. էլ ձայն չկայ:

— Այո. չե՞ս լուռ, այ ականջ դիր: — Դրսից քամու մոտոցի հետ միասին լուռ էր սիւների ծածուցը՝ տխուր, միակերպ, ինչպէս մի հսկայական օրօր յաւիտեան քնող նահատակի վրայ:

— Ինչո՞ւ թաղել չուիք:

— Հէնց դրա համար եմ կանչել քեզ, վաղը նրան դու պիտի թաղել տաս, դու նրա ընկերն ես եղել...

Օգնականը լուռ էր: Ակնարկը սպանիչ էր Դարձեալ...

— Ես չթունաւորեցի նրան... մոռում էր բանտապետը, նա ուզում էր շարունակել, բայց յանկարծ լուսթիւնը թէ արտասուում է, մաածեց օգնականը և

սարսափեց. . . Բանտապետը գլուխը քաշ էր ձգել, աչքերը սոււերուծեց էին: Ահա նա կամացուկ տեղից բարձրացաւ, վերցրեց լամպը և զողողալով մօտեցրեց բանտապետի դէմքին: Բանտապետը գլուխը բարձրացրեց, զայրոյթով խնայ օգնականի ձեռքից լամպը, զարկեց յատակին և փշուր փշուր դարձրեց գռեցնով.

— Դաւաճան, ընկերդ էր. . .

Անենակում խաւար տիրեց, ամէն մի անկիւնում տասնեակ փայլուն աչքեր պլպլացին. ապա մեծացան, մեծացան. . . սարսափելի էր, պէտք էր դուրս փախչել օգնականը դուռը չէր գտնում. քանի անգամ նա պտոյտ գործեց, վերջապէս ուժասպառ, քրտնաթոր հազիւ գտաւ դուռը և գլուխը զգուշութեամբ դուրս հանեց:

Դուրսն էին սարսափելի էր, խաւար, քամի, և կախաղանը շարունակում էր ողբալ իր միակերպ ճաճուցով և դիակը ձօճուում էր օդի մէջ: Ո՛ւր քնայ. . . նա վճռեց կրկին վազել և անցնել բայց հազիւ մի քանի քայլ արած, նա աչքերը վեր բարձրացրեց, — առջևում, խաւարի մէջ, երկու աչքեր փայլում էին, արիւնոտ, ձոթուած. նրա ջնկները ծալեցին. . . Դողդողալով եկաւ դէպի բանտապետի դուռը. «Դաւաճան». . . կրկին մոմուսց բանտապետը. ամբողջ շախարհն էր խօսում այդ մի հատիկ բերանով: Օգնականը յետ դարձաւ և այս անգամ վազեց թափով: Քա՛մ ի՛ն նրան չէթողեց առաջ գնալ, նա կանգ առաւ հէնց կախաղանի տակ: Քրտնաթոր թափուում էր վրայից, բայց նա դողում էր, տամիւնը իրար էին զարկուում: Ապա նայեց վերև, դիակն այս անգամ էլ ոչնչաց բարկացած չէր, աչքերը նայում և թարթում էին մեղմ, կարեկից և արիւնոտ. շրթունքները կամացուկ մըմընում էին «ընկեր, ընկեր, ընկեր». . . Այս բառի տեղ նա կ'ուզէր լսել իր գլխին ճայթող մահացու կայծակի որոտը. ո՛ւր փախչել ազատելու համար: Ոտներն իրեն չէին հնազանդուում, նա յինեց կախաղանի սեանը և սարսափած նայում էր ձօճուող դիակին երկար, երկար, և լսում էր կախաղանի ողբաձայն ձուցը:

Նա յիշեց բոլորը. . . իր գլխի վերև օրօրող դիակն իր «ընկեր» էր. . . ո՛ւր էր ինքը և ո՛ր իջաւ: Կ'ուզէր արտասուել բայց չկար այդ զովացուցիչ արցունքը, մինչդեռ կուրծքն ուռած էր, այրում էր, և նա աւելի և աւելի մօտ էր սեղմուում օրօրող սեանը, սորորում էր կուրծքը՝ ներսի բոցը մարելու համար. . . Իգուր:

Երկար նա գարաւում էր վերաւոր օձի պէս խաւարի և միայնութեան մէջ. յանկարծ նա թողեց սիւնը, բռնեց գլուխը, կանգ առաւ մի փոքր, ապա տենդոտ շարժումներով մօտեցաւ, վերցրեց սանդուխքը, դրեց բարձրացաւ, պարանն արձակեց, դիակը վայր ընկաւ և նա արագութեամբ նոյն պարանն իր պարանոցը ձգեց, ձօճուց օդի մէջ. քամու ձայնին խառնեց մի քանի խոխոց. . . և ամեն ինչ վերջացաւ:

Եւ նայում էին իրար այդ երկու դիակները չուած աչքերով մէկը վերևից, միւսը ներքևից, և լսում էր խաւարի մէջ բանտապետի հեծկտանքը. . .

Եւ աղատութեան ոգին անցնում էր այդ դիակների վրայով, մէկին ժպիտով, միւսին խտու նայելով. . .

Գ. Ա. Բ. Ի. Բ.

Ն Ի Ի Բ Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

ԽՍՐԱԳՐՈՒԹԻՒՆՆ Ստացած է՝

Ս. քաղաքէն Պ. 250 Քր. — Փոսթբերգէն Վաւախա՛ խումբ 25 մարդ. — Պիրզուէն Մ. — 5 դրամ. — Համբուրգէն Պ. 70. 50 Քր. — Տիւրինգէնէն մ. 6 Քր. — Բ. քաղաքէն Պ. 8. 50 ուրբի. — Ժընէվէն Ա. 30 Քր., Կարմիրէն 10 Քր. — Տիւրինգէն Ժարի 6 Քր. — Հիլազոյլէն Գ. Պոզնան 2 դուր. — Մ. — Թիւն 10 դուր. — Բոստանմայէն Վաւախա՛ խումբ Գեորգ Ստեփաննան 10 Քրամբ, Գլխիկոր 5, Շ. 3., Կ. Ատուածատուր 2-ական օր. 2. Թ. 1: (Գումար 20 Քր.):

ՈՍԿԵՅԱՆՔԻ Կօմիտէն՝

Արշաւոր խումբն Ապտամբ 60 դասեկան, Ոսկի, Ժառիկ, Նորայր 6. 25-ական, Ժառայ 5, Գեորգման խումբ, Փայլակ, Շասէն 5. 25-ական, Արիւն խումբ 8. 25, Վեց-հարաւածան 20, Արարատ (10 մէհտ) 200: ԱՐՇԱԿԱՆՆԵՆ՝ Անճաղոն խումբ 23. 50, Երկիւղած խ. 16. 50, Ազգասէր խ. 10, Կիրակոս 20, Վեց-հարաւածան 20, Թուր 6. 25, Սուր, Փայլակ 5. 25-ական, Արսլաննան խումբ 20. 50: Գումար 455 դասեկան:

ՆԱԽԱՅԱՆԳՍՅՈՒ Կօմիտէն՝

ԺՄԱԿ գիւղից. — Պ. Մ., Ս. Մ. 10-ական ուրբի, 8. 4. 5, 70. Շ., 8. Թ., Համի 3-ական, Փեղիկի, 70. 4., Գ. Մ., Կալայծի, Ս. Կալայծի, Կ. Ա. մէկուէկ ուրբի, — 8. Ա. 70 կօպէկ, Ա. Կ., Օլիկ, Մ. Ա., Մ. Կ. 50-ական կոպ., 8. Բ. 35, Կարագէօզ 20, Թակը 15, Շապար 5: Գումար 43 ուրբի 45 կօպէկ:
ԱՂՊՁԻ ՓՈՒՂԱՐՆ. — 8. Մ. 2 ուրբի, Եսազի 1, — 3. Բ., Եմսողի, Կոտող, 8. Կ. 50-ական կօպէկ, Կարմ 40, Կէնճան, Հիրաթ, Կօլի, Լօպիան 20-ական: Մայիս, յունիս եւ յուլիս ամսամայիսերից 18 ուրբի: Նիկօլից սեպտեմբերի ամսամայիս 1: Գումար 25 ուրբի 20 կօպէկ:
ՄԱՅՐԻ ԱՆՂԱՔԵՆ 1898 հուլէն Ապար 700 ուրբի, Ամիրխան 400, Մայ 200: Գումար 1300 ուրբի:

ՑԱԳԱՐ Կեդր. Կօմիտէն՝

Նարեկացի (օգնութ. եւ սեպտ.) 80 դասեկան, Հրաչ (օգնութ. եւ սեպտ.) 80, Արեւ, Սուրբ Զատիկ 108-ական, Հրաչ (հոկտ. նոյեմբ.) 80 դասեկան, Նարեկացի (հոկտ. նոյեմբ.) 80, Հրաչ-Նարեկ 20, Պերճ 5 ամսական (յուլիսէն նոյեմբ.) 50, Հրվէժ 2Ղ. 20, Եփոթ 2Ղ. 5: Գումար 631 դասեկան:

ԱՊԱՌԱՄԻ Կօմիտէն՝

Յունվար եւ յուլիս (1899 թ.) ամիսներուն, իմիչի պլաց, Կե-տեւեալ նւերները. — Ոյժ՝ 150 ուրբի, Նեղուկ՝ 50, Նուա-տակ՝ 48. 68, Օրբորդ 35, Մարիամ՝ 15, Նիսո, Մոսի, Թա. . . Պա. . . 10-ական, Բիծի 5. 5, 70., Գ. 70., Թ., Գ. 8., Պառու 5-ական, Ն. 8., Լ., 3-ական, Գալիլիա, Գայիանէ 1. 20-ական, Վարդիճեր, Աննա 0. 80-ական: Գումար 378 ուրբի 78 կօպէկ:

ՈՍԿԱՆԱՊԱՏԻ Կօմիտէն՝

Խումբէ մը 300 ուրբի, 8. Մ., Դ., 8. Գ., Բ., Բ., Ս., 100-ական, 8. 50, Ս., 70., Ար., Կ., Մ. 25-ական, Ս. 15, Մ. 10: Գումար 1,100 ուրբի:

ԲԱԿԱՆԵԱՆ Կեդր. Կօմիտէն՝

ՀՈՎԻՏ Կօմիտէն 73 լեւ 40 սանթիմ: — Բ. քաղաքի Տու-ժիկ անկախ խ. 21 (մուտքի համար) եւ 16. 80 նոյեմբերի ամսամայիս, Տօմարիչի Սլաք անկախ խ. 10: Գումար 121 լեւ 20 սանթիմ:

ՄԱԿԵՐՕՍ Կօմիտէն «Արեւելեան» կրկու խումբերէն 47. 55, «Արեւելեան» վիճակահանութիւն 20, Բաբկէն Սիւնի խ. 30, Եաթէ խ. Թեր-հաշիւ, Լ. Փափագ 100-ական, Մ. Աղաւ՝ 60, Պէտտիկի 2ազը 20, Աղմիտէ, Հօրք 5-ական: Գումար 387, լեւ 55 սանթիմ:

ՎՐԻՊԱԿ. «Դրօշակ» 6-րդ համարի մէջ տպագրուած Բաւ-կաննան Կեդր. Կօմիտէի ներստուութեան ցանկին մէջ ուղղել է Կետեւեալ տպագրական սխալը. — ԱՄՐՈՑ քաղաքի Կօմիտէն ու-ննալով 287 լեւ 80 սանթիմ մուտք. ատկեց Կեդր. Կօմիտէին փոխադրել է 127 լեւ 55 սանթիմ: Ուրեմն այս վերջինը սխա-լամբ կրկուեր է Կեդրօսականի մուտքին մէջ: